AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 1

9 ՀՈՒՆԻՍ 2017 ՈՒՐԲԱԹ 22(5470)

# Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Թեհրանի վրդովված արձագանքը ԱՄՆ ցավակցությանը

Իրանի արտգործնախարար Մոհամեդ Ջավադ Զարիֆը «նողկալի, զզվելի» է որակել ԱՄՆ նախագահ Թրամփի՝ հունիսի 7- ին Թեհրանում 17 զոհ գրանցած ահաբեկչության առիթով ցավակցությունը:«Ահաբեկչությանը սատարող պետություններն իրենք կարող են դառնալ զոհն այն չարի, որին խրախուսում են», հայտարարել էր ԱՄՆ նախագահը՝ ցավակցելուց հետո, հաղորդում են գերմանական լրատվամիջոցները:Նույն աղբյուրները ծանուցում են նաեւ, որ «միջազգային ահաբեկչությանը սատարելու» պատճառաբանությամբ ԱՄՆ Սենատը կողմ է քվեարկել Իրանի հանդեպ նոր պատժամիջոցներ կիրառելուն, թեեւ հայտնի է, որ Թեհրանը Իրաքում մեծ դերակատարում ունի ԻՊ դեմ պայքարում: Մայիսին Սաուդյան Արաբիա այցի ժամանակ Թրամփը պահանջել էր մեկուսացնել Իրանին:

**Ան. Հ., Գերմանիա**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Կարելի կլինի՞ կանխել «մեծ պայթյունը» տարածաշրջանում

Այս շաբաթ ծրագրել էի անդրադառնալ Փարիզյան համաձայնագրից հրաժարվելու Մ. Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփի որոշման՝ 194 պետությունների վրա թողած տպավորության եւ շրջակա միջավայրի վրա կլիմայական փոփոխություններով պայմանավորված սարսափելի հետեւանքների եւ աշխարհի բնակչությանը սպառնացող էլ ավելի սարսափազդու հեռանկարներին: Սակայն մեր տարածաշրջանում, հետեւաբար նաեւ մեր երկրի համար վտանգավոր ամենավերջին զարգացումները ստիպում են հետաձգել կլիմայական փոփոխությունների թեմային անդրադառնալը եւ ընթերցողների հետ մի քանի մտքեր փոխանակել տարածաշրջանի պայթյունավտանգ կացության շուրջը՝ համապատասխան մատնանշումներով:

Հասկանալի է, որ առաջին հերթին մեզ մտահոգողը հարավային մեր հարեւան ու բարեկամ երկրում չորեքշաբթի օրը տեղի ունեցած ահաբեկչական հարձակումն էր, թիրախ ընտրելով Իրանի խորհրդարանը: Իր անսպասելիությամբ, կատարման պրոֆեսիոնալիզմով եւ պատասխանատվության գրեթե վայրկյանական ստանձնմամբ, 17 մարդու կյանք խլած այդ ահաբեկչական գործողությունը կարող է դետոնատորի (պայթուցիչ) դեր կատարել Սաուդյան Արաբիա-Իրան հարաբերությունների լարված ռումբի համար: Ճիշտ է, արարքի պատասխանատվությունն ստանձնողը «Իսլամական պետություն» (ISIS) ահաբեկչական կազմակերպությունը եղավ, սակայն հրահանգողը, առանց դույզն կասկածի, Ար-Ռիադն էր, որի արտգործնախարար Ադել-ալ-Ջուբեյրը արարքից ընդամենը մի քանի ժամ առաջ ուղղակի էր սպառնացել Թեհրանին՝ «պատիժը լինելու է շատ խիստ»: Իսկ «պատժելու» պատրվակը արդեն իսկ պատժված եւ պատժվող Քաթարին օդային ու ծովային օգնություն հասցնելն էր Իրանի կողմից: Մարդասիրակա՛ն օգնություն Սաուդյան Արաբիայի եւ վերջինիս արբանյակ-հարկատու-դաշնակից 6 երկրների կողմից բոյկոտի ու շրջափակման ենթակա Քաթարին:

Իսկ վերջինիս վերագրված մեղքը՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությանը ֆինանսավորելն ու հովանավորելն է՝ ընդդեմ վահաբիստական Սաուդյան Արաբիայի ու սուննիական մյուս արաբ երկրների կամքի եւ, դրանով իսկ, օժանդակելը շիիթական Իրանին՝ Ար-Ռիադի արքիթշնամուն: Մինչդեռ Քաթարը օժանդակում էր նաեւ ISIS-ին՝ Սիրիայում:

Այլ խոսքով, այս պարագայում էլ մենք գործ ունենք ձեւով դավանանքային ու բովանդակությամբ ռազմաքաղաքական ծանոթ հակամարտության հետ, որի նպատակը մահմեդական աշխարհում տիրապետող դիրքի ու դերի ստանձնումն է:

Բայց հարցերի հարցը այն է, թե ինչո՞ւ հիմա, ավելի քան երկու տասնամյակ շարունակվող եւ ցարդ «փոխանորդային պատերազմի» (proxy war) բնույթ կրող հակամարտությունը այսպես ավելի ուղիղ՝ ճակատային ձեւ ստացավ եւ այժմ սպառնում է արյունալի նոր թեժացումների առաջնորդել արդեն իսկ վառոդի տակառի վրա գտնվող ողջ տարածաշրջանը:

Եթե նայենք օրացույցին որոշելու համար տարածաշրջանային թշնամական պրոցեսների արագացման բուն ժամկետը, ապա կնկատենք 2017 մայիսի 21-ը, այսինքն այն օրը, երբ Մ. Նահանգների նախագահը իր նշանավոր ճառն էր արտասանում Ար-Ռիադում հավաքված սուննի երկրների առաջնորդների, այդ թվում, անշուշտ, սաուդյան թագավորի ու Եգիպտոսի նախագահի առաջ: Այդտեղ է, որ Թրամփը պաշտոնապես հայտարարեց Սաուդյան Արաբիային 110 մլրդ. դոլարի զինամատակարարումների մասին, մեծագույն հպարտությամբ, հակառակ փաստին, որ այդ պայմանավորվածությունը ձեռք էր բերվել դեռեւս իր նախորդի՝ նախագահ Օբամայի ժամանակ, սակայն վերջինս զգուշանում էր գործնական քայլ կատարել՝ տարածաշրջանում լարվածությունը էլ ավելի չսրելու մտահոգությամբ:

Այդ ճառի ընթացքում էր նաեւ, որ Թրամփը հայտարարեց, թե ծայրահեղականության դեմ կռիվը չարի ու բարու միջեւ է, եւ ոչ թե տարբեր կրոնների, եւ 5 անգամ կրկնեց իր կոչը՝ «Դրանց դո՛ւրս արեք», միաժամանակ չմոռանալով մեղադրել Իրանին՝ Միջին Արեւելքի բազմաթիվ խնդիրների համար, ադպիսով սրելով դավանանքային պայքարը տարածաշրջանի ոխերիմ ախոյանների միջեւ:

Թրամփի հայտարարությունը ոգեւորեց հյուրընկալ երկրի ղեկավարներին, մինչ Իրանի արտգործնախարար Մուհամադ Ջավադ Զարիֆը հեգնական շպրտեց. «Իսկական ընտրություններից նոր դուրս եկած Իրանը (Թրամփի կողմից) հարձակման ենթարկվեց ժողովրդավարության ու հանդուրժողականության բաստիոնից»՝ Սաուդյան Արաբիայից:

Այժմ, հունիսի 7-ի ահաբեկչությունից հետո, տարածաշրջանի ճակատագիրը շատ բանով է կախված Թեհրանի զսպվածությունից ու խելամիտ քայլերից, բայց նաեւ՝ մեծ տերությունների, նկատի ունեմ հատկապես Ռուսաստանի, Չինաստանի ո Գերմանիայի կեցվածքից, որոնք թերեւս ի վիճակի են զսպել իր տանն արդեն իմպիչմենտի սպառնալիքին ենթակա նախագահի անհավասարակշիռ քայլերը, ամերիկյան ժողովուրդի աջակցությամբ: Այլապես՝ «մեծ պայթյունը» կարող է տեղի ունենալ:

Մինչ այդ՝ մեր փոքրիկ երկիրը պետք է աչալուրջ հսկի ու պահի իր սահմանները:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Հրեշտակներ՝ հակակոռուպցիոն հանձնաժողովի համար

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ազգային ժողովի արտահերթ նիստում առաջին ընթերցմամբ ընդունվեցին Կոռուպցիայի կանխարգելման հարցերով հանձնաժողով ստեղծելու նախագիծն ու դրան հարակից փաթեթը: ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները եւս միացան քվեարկությանը, քանի որ նրանց հնչեցրած առաջարկը, թե գոնե ընդդիմադիրները մասնակցեն այս հանձնաժողովի անդամների առաջադրմանը, ըստ հիմնական զեկուցող, ԱԺ փոխնախագահ **Արփինե Հովհաննիսյանի,** քննարկումների արդյունքում ընդունելի էր համարվել:

Մեր լրատվամիջոցները, սակայն, վերջին երկու օրը կենտրոնացել էին այս փաթեթում առկա ազդարարման համակարգի եւ ազդարարների ինստիտուտի վերաբերյալ մտահոգությունների վրա, մանավանդ՝ ՀՅԴ ական պատգամավոր **Անդրանիկ Կարապետյանի**՝ կաշառակերության կամ կոռուպցիայի վերաբերյալ հաղորդում տալը «գործ տալու» տերմինով կոչելու եւ ազդարարման գաղափարից հաժարվելու ու հայ մնալու հանրահայտ ելույթից հետո: Ըստ օրենքի՝ կոռուպցիայի դեմ պայքարում ակտիվորեն ներգրավվելու են ազդարարները, ընդ որում՝ նրանց վերաբերյալ տվյալների չհրապարակման եւ, առհասարակ, պաշտպանված լինելու պարագայով, անգամ՝ ծառայության դիմաց վարձատրվելու հնարավորությամբ մտահոգված է օրենքը:

Մենք օրիգինալ չենք լինի, ինչպես մեր ԶԼՄ-ների շատ ներկայացուցիչներ՝ կուսակցության հետ չհամաձայնեցված կարծիքի համար այս պատգամավորին դատափետելու «սուրբ» գործին չմիանալով: Լրագրողներին առավել պիտի հետաքրքրեր ոչ թե դա, այլ այն, թե արդյոք մի նոր, անգործունակ կառույց չե՞նք ստեղծում, քանի որ այն, ինչ պետության մեջ լիարժեք չեն կարողանում անել կամ տարբեր շահադիտական պատճառներով չեն անում ոստիկանությունը, դատաքննական -նախաքննական մարմինները, այն է՝ չեն բացահայտում կոռուպցիան եւ կոռուպցիոներներին, ավելին, իրենք եւս միանում են կոռուպցիոն սխեմաներին, հիմա, 2018-ից իր վրա է վերցնելու հինգ հոգանոց, իսկ ավելի ստույգ, ընդդիմադիրների բնորոշմամբ՝հրեշտակների ու սուրբ լինելու կանխավարկածով առաջնորդվող հինգ անձանցից կազմված- մեն միակ մի հանձնաժողով:

⇨4

## Թե ինչ եղավ հետո, երբ... ահաբեկչության թիրախ դարձավ Թեհրանը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
**Ստեփանակերտ**

Բաքվում իսլամական խաղերին ընդառաջ Իլհամ Ալիեւը մուսուլմանական երկրներին կոչ արեց խզել Հայաստանի հետ հարաբերությունները, որովհետեւ «Ղարաբաղում հայերը պայքարում են ոչ միայն Ադրբեջանի պատմության եւ ազգային ինքնության, այլեւ իսլամական քաղաքակրթության եւ ավանդույթների դեմ»: Որպես այդ հարցում ընդօրինակելի՝ նա առանձնացրեց Պակիստանը եւ Սաուդյան Արաբիան, երկրներ, որ դիվանագիտական հարաբերություններ չունեն Հայաստանի հետ:

Դրանից կարճ ժամանակ անց նա հայտնվեց Սաուդյան Արաբիայի մայրաքաղաքում, որտեղ ԱՄՆ նախագահը կլոր սեղանի շուրջ էր հավաքել Պարսից ծոցի եւ հետխորհրդային տարածքի մի շարք իսլամադավան պետությունների առաջնորդներին: Ալիեւը Թրամփի ուշադրությանը չարժանացավ: Այդ դերը վերապահված էր Ղազախստանի եւ Ուզբեկստանի նախագահներին, որոնց հետ Թրամփը հանդիպեց առանձին-առանձին: Հայտնի չէ, թե ինչով է զբաղվել Ալիեւը Էր-Ռիադում, բայց գիտենք, որ Սաուդյան Արաբիան ԱՄՆ հետ 110 միլիարդ դոլարի սպառազինությունների պայմանավորվածության է եկել: Բացառված չէ, որ որոշ զինատեսակներ Էր-Ռիադը խոստացել է հետագայում վերավաճառել Ադրբեջանին:

Թեհրանում հունիսի 7-ին առնվազն տասներկու մարդու կյանք խլած ահաբեկչությունների առթիվ մեկնաբանություններում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ դրանք «ունեն արտաքին հետագիծ»: Վերլուծաբանները ոչ առանց հիմքի ենթադրում են, որ տարածաշրջանում համարձակ գործելու քարտ-բլանշ ԱՄՆ-ից ստացել է Սաուդյան Արաբիան: Մյուս երկրները «ոգեւորված են Իրանի նկատմամբ ԱՄՆ նոր վարչակազմի վերաբերմունքից»:

Չխորանալով խնդրի մանրամասնություններում, նկատենք մի հանգամանք. եթե ադրբեջանական կողմի ընկալումներում Սաուդյան Արաբիան բարեկամ երկիր է, որովհետեւ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չի հաստատում, ապա Իրանը համարվում է «իսլամական համերաշխությունը խախտող եւ Հայաստանի զավթիչ քաղաքականությանը սատարող» երկիր: Այս հարթությունում Իրանը դիտվում է որպես գրեթե թշնամի, հետեւաբար նրա նկատմամբ գործում է «որքան՝ վատ, այնքան՝ լավ» սկզբունքը:

⇨2



**Թե ինչպե՞ս «Կատարը» դարձավ Քաթար**

էջ 5



**Հայրենիքի եվ բնության խենթը. Նիկոլ Աղաբաբյան**

էջ Բ



**Բժշկապետի կտակը. մասունքի խորհուրդը**

էջ 8

AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Մեծ լեռ, փոքր շուք

Հարաւային Սուտանի Նուպա լեռներուն մէջ աշխատող ամերիկացի բժիշկ Թոմ Քաթինան արդեօք գիտէ՞ր Հայաստանի տեղը քարտէսի վրայ, կամ, ընդհանրապէս լսա՞ծ էր Հայաստան անունը, չեմ գիտեր, այդ մասին բան չեն ըսեր թերթերը, սակայն կ'ըսեն, երբ Շառլ Ազնաւուր արտասանեց իր անունը եւ իրեն յանձնուեցաւ «Աւրորա» մրցանակը Երեւանի Կ. Դեմիրճեան համալիրի բեմահարթակին վրայ, ան շնորհակալութիւն յայտնեց Հայաստանին եւ մրցանակի հիմնադիր հայ բարերարներուն:

Ազգ մը, որ դար մը առաջ նահատակուեցաւ, այսօր մարդկութեան անսակարկ ծառայութիւններ մատուցանող նուիրեալ անհատներ կը պատուէ, պարզապէս բարեգործութիւնը քաջալերելով, չարը խափանելու իր առաքելութեան մէջ:

Համաշխարհային- համամարդկային այսպիսի կարեւոր իրադարձութեան մը արձագանգները իր մեծութեան չափով չեղան, գոնէ ես չտեսայ կարգ մը եւրոպական հեռուստակայաններէ: Հայկական առածը կ'ըսէ «Մեծ լեռը մեծ շուք կ'ունենայ», պարզ իրականութիւն մըն է, սակայն այս «լեռան» պարագային ինչո՞ւ անոր շուքը իր չափով չեղաւ, երբ միջազգային շատ մը «բլուրներ» կը ներկայացուին Հիմալայեան լեռներու շուքով...

Շատ ասպարէզներու մէջ գրեթէ լուսանցքուած ենք, դուրս մնացած ենք լուսարցակի կլոր տարածքէն, եւ ասիկա մեր փոքր ազգ ըլլալու պատճառո՞վ է, թէ՞ ուրիշ պատճառ կայ:

Երբ Արցախի հարցով, որպէս «ուրիշի տարածքը գրաւող», Հայաստանը դատապարտելու ալիք կը բարձրանայ, ամէն կողմէ կ'արձագանգեն մեղադրողին ձայնակցելով: Իսկ, ինչո՞ւ այդպէս կ'ըլլայ, մտածա՞ծ ենք ազգովին, կամ մեր պետութիւնը մտածա՞ծ է, թէ աշխարհ իրաւատէրը դատապարտելով, անիրաւին կողմը կը բռնէ...

Ու այստեղ կու գայ շփոթը փարատող պատասխանը՝ ԴՐԱՄԸ...

Ամենազօր, ամենակարող ազդակը, որ կրնայ լեռներ շարժել, ուր մնաց որ մարդոց բարոյականին վրայ չազդէ: Ուրեմն եթէ դրամ չկայ, արդարութի՞ւն ալ չկայ... Դժբախտաբար, այո՛: Euronews-ի նման հսկայ կայան մը կը թերանայ միջազգային մրցումներու մէջ առաջնութիւն շահած հայ մարզիկներու մասին լրատուութիւն սփռելու, անդին թրքական կամ ատրպէյճանական որեւէ նիւթ օրուան ընթացքին քանի անգամ կը ցուցադրուի.: Ասիկա դրամի պատճառով չէ, հապա ի՞նչ է:

Անշուշտ ոչ միայն վերոյիշեալ բնագաւառներուն մէջ անտեսուած ենք, այլեւ գրականութեա՛ն, արուեստի՛, գիտութեա՛ն... Օտար երկիրներու մէջ ապրող հայեր պարտադրած են իրենք զիրենք իրենց անուրանալի մեծութեամբ, սակայն Հայաստանի պարագային նոյնը ըսել դժուար է:

Ինչ- ինչ գրական գոհարներ ունինք, որոնք ոչինչ կը զիջին շատ մը համաշխարհային գրականութեան մէջ ընդգրկուած գործերու, սակայն կը մնան դուրս: Սոլժենիցինի «Գուլակ Արշիպելակ»-ին ի՞նչ կը զիջի Մկրտիչ Արմէնի «Պատուիրեցին յանձնել ձեզ»ը, կամ Գուրգէն Մահարիի «Ծաղկած փշալարեր»ը. իմ կարծիքով՝ ոչի՛նչ, բացի այն հանգամանքէն, որ Սոլժենիցինը հակասովետ էր եւ երկրէն վտարուած: Այս պարագային ալ քաղաքական ազդակն էր, որ միջազգայնացուց զինք, ինչպէս պատահած էր Փասթերնաքի «Տոքթ. Ժիւաքօ»ին:

Ոչ դրամ ունինք, ոչ ալ քաղաքականութեան մէջ՝ խօսք... Սակայն անսպառ անհաս հանճարներ ունինք բոլոր ասպարէզներու մէջ ալ: Երեւի անոնց պէտք է ապաւինինք, որպէսզի երեւինք միջազգային հարթակի վրայ:

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

# Առաքելութեան նոր մեկնարկ.

*Աւարտեցաւ Մայր աթոռի եկեղեցական ներկայացուցչական ժողովը*



Մայր աթոռը չի թաքցներ, որ Սբ. Էջմիածնի եւ Երուսաղէմի Պատրիարքութեան միջեւ տարակարծութիւններ կան: Այս մասին լրագրողներուն հետ խօսելու ընթացքին յայտարարեց Մայր աթոռի դիւանապետ՝ Տ. Արշակ եպս. Խաչատրեանը: Սրբազան հայրը այդ խնդրէն բացի խօսեցաւ երէկ իր լրումին հասած եկեղեցական-ներկայացուցչական ժողովի ընդհանուր օրակարգին մասին, որն առնչուած էր յատկապէս եկեղեցւոյ կանոնադրութեան վերամշակման եւ բարեփոխման հարցերուն: Ներկայիս գործող կանոնադրութեան վերջին տարբերակը մշակուած է 1945 թուականին, իսկ օրերս քննարկուած եւ բարեփոխումներու ենթարկուած կանոնադրութիւնը հիմք ունի նոյն այդ կանոնադրութիւնը:

Կանոնադրութեան մասին յաւելեալ տեղեկութիւններ պիտի տրուին յառաջիկայ օրերուն, բայց եւ այնպէս յստակ է, որ Մայր աթոռի եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հիմնական մտահոգութիւնը կը վերաբերի Եւրոպայի թեմերուն, ուր կարգ մը հիմնական թեմեր մինչեւ այս պահը կանոնադրութեան խնդիր ունին:

Այս մօտեցման ելակէտը նոյն այդ եւրոպական թեմերուն մէջ տիրող ընդհանուր իրավիճակն է, որուն մասին ժողովի բացման նիստին ակնարկեց Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսը: Վեհափառը նշեց, որ կարգ մը թեմերու յատկապէս աշխարհիկ պատասխանատուներ անձնական մեկնաբանութիւններ թոյլ տալով կը դանդաղեցնեն համայնքային գործունէութիւնը ու յաճախ պատճառ կը դառնան անհասկացողութեան եւ յարաբերութիւններու լարման:

Վեհափառը նաեւ վստահեցուց, որ ի հեճուկս տարածուող խօսքերուն այն մասին, թէ Մայր աթոռը նպատակ ունի «ձեռք դնել» թեմերու պատկանելիութիւնը եղող կալուածներուն վրայ, Սբ. Էջմիածինը այդպիսի օրակարգ չէ դրած իր առջեւ եւ տեղի ունենալիք բարեփոխումները կը միտին հունաւորել առկայ յարաբերութիւնները եւ դրական ընթացք մը տալ թեմերու կրօնական- ազգային կեանքին:

Եւրոպական երկիրներու մէջ գործող համայնքի «երեւելի»ներ յաճախ այն կարծիքով կ'առաջնորդուին, որ իրենք «անկախ կառավարութիւն» են եւ կրնան գործել ինչպէս որ յարմար կը տեսնեն: Անոնք այս առումով եւս կը մոռնան, որ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին ազգային եկեղեցի է: Հաստատուն, իրաւական հիմք ունեցող եւ այսօրուան պահանջները նկատի առնող կանոնադրութիւն մը դրական եւ բարեբար դեր պիտի ունենայ առկայ հարցերուն լուծման եւ տարուելիք աշխատանքներուն նոր թափ մը տալու տեսակէտէն: Այստեղ պէտք է նշել, որ անցնող օրերուն մանրակրկիտ քննարկման դրուած եկեղեցական կանոնադրութիւնը պիտի վաւերացուի յառաջիկային հրաւիրուելիք ազգային-եկեղեցական ընդհանուր ժողովին կողմէ, որ պիտի հրաւիրուի գործող կանոնադրութեան հիման վրայ:

Մայր աթոռ- Թեմեր յարաբերութիւններուն նոր ընթացակարգ մը ստեղծելէն բացի կան նաեւ Էջմիածին- Անթիլիաս բաւական կնճռոտ եւ երկար տարիներէ ի վեր «լռութեան թաղանդ»ով մը պատուած տարակարծութիւնները: Անցնող օրերուն լուսարձակներէ հեռու եղած քննարկումներուն մէջ բնականաբար այս հարցն ալ քննարկուած պէտք է ըլլայ: Ու չնայած անոր, որ այդ առումով կրնան հրապարակային յայտարարութիւններ չհնչել, սակայն այս ժողովի ընդհանուր տեսադաշտը իրաւական կարողութիւնը ունէր այդ հարցերուն անդրադառնալու եւ անցնող երկու տարիներուն «մէկ կողմ դրուած» Էջմիածին- Անթիլիաս ստեղծուած միացեալ յանձնախումբերուն նոր եռանդ մը տալու:

Մեր եկեղեցւոյ շարք մը բարձրաստիճան եկեղեցականներ կը հաւատան, թէ երկու Կաթողիկոսական աթոռներու յարաբերութեանց միջեւ գոյութիւն ունի դրական ընթացք մը եւ այդ դրական հունաւորումը պէտք է ամրացուի ու գործնական քայլերու առաջնորդէ:

Կայ նաեւ Երուսաղէմի ու Կոստանդնուպոլսոյ պատրիարքական Աթոռներուն հետ յարաբերութիւններու հարցը: Մինչ առաջինին պարագային տակաւին կան բաւական նկատելի տարակարծութիւններ, անդին Պոլսոյ մէջ առկայ իրավիճակը եւ Պատրիարքի մը չգոյութիւնը նոյնպէս կը խանգարէ, որ Մայր աթոռի հետ առկայ յարաբերութիւնները չանցնին պաշտօնական կապերու ընդհանուր եզրը: Մայր աթոռի ունեցած դրական կեցուածքները եւ նախամեծար Աթոռի մը ցուցաբերած վերաբերմունքը մեծապէս օժանդակեցին, որ տեղի ունենայ տեղապահի սպասուած ընտրութիւն եւ ապա այդ ընտրութիւնը ամրագրուի եւ համայնքը իր առաջին քայլերը կատարէ Պատրիարքի ընտրութեան ճանապարհին:

Մայր աթոռը այսօր կանգնած է իր պատմական դերի վերստանձման կարեւոր փուլին առջեւ: Մէկ կողմէ եկեղեցւոյ բարենորոգչական ընթացքը եւ միւս կողմէ Հայաստանով մէկ նոր եկեղեցականներու պատրաստման առաքելութիւնը ցոյց կու տայ, որ յառաջիկայ առնուազն տաս տարիներուն Մայր աթոռի միաբանական կուռ կառոյցը պիտի դառնայ մեր եկեղեցւոյ հոգեւոր սիւները ամրացնող գլխաւոր գործօն:

Ու այդ ժամանակատուածէն ետք շատ բնական է, որ այսօրուան պայմաններն ու պատրաստութիւնը ունեցող միաբանները պիտի կարողանան համալրել Սփիւռքի եւ Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ առկայ հոգեւորականներու պակասը:

Երուսաղէմն ու Պոլիսն ալ անմասն պիտի չմնան այդ վերանորոգչական գործընթացներէն, որովհետեւ յառաջիկայ տարիներուն այդ պատմական համայնքներուն մէջ զգացուելիք հոգեւորական կոչումներու նուազումը կրնայ լուրջ հարցերու առջեւ դնել պատրիարքական այդ զոյգ աթոռները:

Մնացեալ հարցերը եւ մանաւանդ Անթիլիասի հետ առկայ տարակարծութիւնները կրնան լուծուիլ միայն ժամանակի ընթացքին, անգամ մը եւս ամրացնելով այն մօտեցումը, թէ մէկ ու միակ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ գաղափարը առասապելաշիպ միֆ չէ, այլ մարդագրական, գաղափարական, եւ պայմաններու ընդհանուր պրիսմակէն անդին Հայ եկեղեցին հայոց հողին վրայ եւ այդ հողէն սնունդ առնող ոգեղէն շէնք է:

# Թե ինչ եղավ հետո, երբ... ահաբեկչության թիրախ դարձավ Թեհրանը

⇨1 Ադրբեջանում, ինչ խոսք, կան խմբեր եւ անհատներ, որոնք Իրանի հետ հակամարտությունը համարում են անարդյունավետ: Այդուհանդերձ, մասնագետները տագնապով նշում են, որ վերջին տասնամյակում Ադրբեջանի իշխանությունները հետեւողականորեն իրականացնում են իսլամի սուննի աղանդը տարածելու քաղաքականություն: Դա նպատակադրվածություն է, որով Բաքուն իրեն ապահովագրում է շիա Իրանի ազդեցությունից:

Թեհրանի ահաբեկչությունից հետո ադրբեջանական մամուլի սրված հետաքրքրությունը եւ հանգամանքը, որ Իրանի նախագահի անունով Իլհամ Ալիեւի ցավակցական հեռագիրը տարածվեց միայն օրվա վերջին, խիստ կասկածելի են թվում: Այս առումով ուշագրավ մեկնաբանություն է արել Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր եւ իրանագետ **Արազ Ալիզադեն**:

Նա չի կասկածում, որ ահաբեկչությունը կազմակերպել է «Իսլամական պետությունը», «ավելի ճիշտ՝ նրա այն թեւը, որին ղեկավարում է Սաուդյան Արաբիան»:(https://haqqin.az/news/102132)

Ստացվում է հետաքրքրական դիսոնանս. Ադրբեջանի նախագահը գովաբանում է Սաուդյան Արաբիային, խորացնում այդ երկրի հետ համագործակցությունը, իսկ ադրբեջանցի խորհրդարանականը մեղադրանք է հնչեցնում բարեկամ պետության հասցեին՝ չկասկածելով, որ Թեհրանի ահաբեկչությունները կազմակերպել է «Իսլամական պետության»՝ Էր-Ռիադից ղեկավարվող թեւը: Այսինքն, Արցախի հարցում Ադրբեջանը օժանդակություն է ակնկալում մի երկրից, որը միջազգային ահաբեկչության հովանավորներից, թերեւս, ամենագլխավորն է:

Թեհրանի ահաբեկչություններն, ինչպես ասացինք, տասնյակից ավելի մարդկային կյանք են խլել, կան ավելի քան քառասուն վիրավորներ: Մարդկային կորուստների եւ կրած նյութական ու բարոյական վնասների համար Իրանի բարեկամ ժողովուրդն արժանի է աջակցության, մենք նրա հետ միասին ցավում ենք կատարվածի համար եւ դատապարտում ահաբեկչությունը: Դա փորձություն է, որի շուտափույթ հաղթահարումը Իրանի հնարավորությունների եւ կամքի սահմաններում է: Բայց կատարվածը նաեւ Իրանի համար բացում է կանխարգելիչ քայլերի դաշտ: Այս իմաստով Ադրբեջանը կարող է հայտնվել շատ անհարմար վիճակում. կա՛մ Ալիեւը կսառեցնի Սաուդյան Արաբիայի հետ քաղաքական մեղրամիսը, կա՛մ ստիպված կլինի բացատրություններ տալ Իրանին: Որոշ ժամանակ անց պարզ կդառնա, թե ինչ եղավ հետո, երբ Իրանի խորհրդարանում կրակոցներ հնչեցին եւ պայթյուններ որոտացին իմամ Խոմեյնիի դամբարանում...

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«**Ազգ**» վերլուծական թերթի աշխատակիցները խորապես ցավակցում են իրենց գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանին սիրելի եղբոր՝

**Ասատուր Ավետիքյանի**

անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցանկանում գլխավոր խմբագրին եւ նրա հարազատներին մխիթարություն եւ համբերություն:

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական Վարչությունը եւ Գերագույն Խորհուրդը իրենց խորին ցավակցությունն են հայտնում ՌԱԿ Կենտրոնական վարչության ատենապետ ընկեր Հակոբ Ավետիքյանին սիրելի եղբոր՝

**Ասատուր Ավետիքյանի**

անժամանակ մահվան կապակցությամբ:

AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 3



ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հակակարկտային «բուտաֆորիան» Հայաստանում` 9 տարի առաջ եւ հիմա

## *Ո՞վ է պատասխանատվություն կրելու ահռելի ծախսերի եւ կորուստների համար*



Թե ինչո՞ւ 9 տարի առաջ Հայաստանի կառավարությունը որոշեց Հայաստանի տարածքում հակակարկտային համակարգը ստեղծել այսպես կոչված գազագեներատորային համակարգի հիման վրա, այդպես էլ մութ ու անհասկանալի մնաց, որոշակի ենթադրությունների տեղիք տալով: Դեռ այն ժամանակ այդ համակարգի ցածր արդյունավետության մասին հայտնի էր: Կառավարության որոշման նախագծում ծավալուն անդրադարձ կար նախկինում Հայաստանում գործած եւ աշխարհում եղած հակակարկտային համակարգերին: Հայկական լրատվամիջոցներից թերեւս միայն մեր թերթը անդրադարձավ խնդրին` («Անտրամաբանական մոտեցում հակակարկտային համակարգի ընտրության հարցում», **«ԱԶԳ» 22.07.2009թ.**): Հայկական ԶԼՄ-ները, որպես կանոն, նման «մանրուքներ» չեն հետաքրքրում: Այդ որոշման նախագծից որոշ մանրամասներ հիշեցնելու անհրաժեշտություն կա նաեւ հիմա, երբ հակակարկտային համակարգի արդյունավետության հարցը կրկին բարձրացվել է կառավարության մակարդակով:

2008-ի սեպտեմբերին ընդունված կառավարության որոշման նախագծում նշվում էր, որ հակակարկտային ռազմականացված ծառայությունը Խորհրդային Հայաստանում ստեղծվել է 1964-ին: 1980-ականներին այն ուներ 11 հակակարկտային ռազմականացված կենտրոն` 60 հրթիռահրետանային մարտկոցով: Համակարգում աշխատում էին շուրջ 1700 մարդ: Հայաստանի այն ժամանակվա 15 վարչական շրջանի ավելի քան 1 մլն հեկտար ընդհանուր տարածքի վրա կատարվում էին կարկուտի դեմ պայքարի աշխատանքներ: Այդ աշխատանքներն իրականացվել են ավելի քան 400 միավոր զենիթային հրանոթներով եւ շուրջ 100 միավոր հրթիռային կայանքներով: **Մինչեւ 1992 -ը հակակարկտային պաշտպանության աշխատանքների արդյունավետությունը, ըստ խորհրդային տարիների վիճակագրական տվյալների, կազմել է 94 տոկոս: Արդյունքում, կարկտահարությունից վնասված տարածքները տարեկան նվազել են միջին չափով 20 անգամ, իսկ ստացված եկամուտները գերազանցել են ծախսերն ավելի քան 5 անգամ:** Ծառայությունն իրականացրել է նաեւ ակտիվ ներգործության աշխատանքներ Սեւանի ավազանում տեղումների արհեստական ավելացման ուղղությամբ: Այս դեպքում ստացված եկամուտները գերազանցել են կատարված ծախսերը 8-10 անգամ:

Սակայն, 1992 -ից հակակարկտային աշխատանքները դադարեցվել են ֆինանսական հատկացումների բացակայության պատճառով: Հրթիռահրետանային տեխնիկայի, զինամթերքի, կապի ու տրանսպորտային միջոցների, ռադիոլոկացիոն համակարգերի մի մասը 1990-1993-ականներին ոչնչացել է սահմանամերձ գոտում մարտական գործողությունների ընթացքում, իսկ մնացած մասը` հանձնվել պաշտպանության նախարարությանը:

Հակակարկտային ծառայության չգործելու հետեւանքով միայն բուսաբուծության ճյուղում կորուստները հասնում են 15-20 մլրդ դրամի: Միաժամանակ, հողերը ենթարկվում են էրոզիայի, առաջանում են սողանքներ, մեծապես տուժում են անտառները, արոտավայրերը, բույսերը, կենդանիները, թռչունները, ինչպես նաեւ շենքերը, շինությունները, կոմունիկացիաները, սոցիալ-հոգեբանական ծանր վիճակում են հայտնվում աղետից տուժած գյուղացիները: Ուստի, կառավարությունը անհրաժեշտ է համարել վերագործարկել այս ծառայությունը:

Որոշման մեջ թվարկվում էին նաեւ այն մեթոդները, որոնցով խորհրդային շրջանում պայքար էր տարվում կարկուտի դեմ:

Հրթիռային մեթոդը նշվում է որպես կիրառվող մեթոդներից ամենաարդյունավետը` մինչեւ 70 տոկոս արդյունավետություն, բայց եւ ամենաթանկը: Թվարկվում են այս մեթոդի Հայաստանում կիրառելու հետ կապված դժվարությունները` հրթիռները ոչ կառավարվող են եւ չի բացառվում, որ դրանք պայթեն հարեւան երկրների տարածքում կամ, գործարանային խոտանի պատճառով, հենց գետնի վրա` պատճառելով ավերածություններ եւ զոհեր: Մեկ ներմուծվող հրթիռի արժեքն է 100 հզ դրամ, իսկ տարեկան անհրաժեշտ կլինի շուրջ 30 հազար հրթիռ:

Ավիացիոն մեթոդը հրթիռայինի համեմատ էժան է, բայց արդյունավետությունը կազմում է 50 տոկոս: Այս մեթոդի կիրառումն այդ պահին նույնպես անհնար էր համարվում, քանի որ կարկտաբեր ամպերը հիմնականում առաջանում են Հայաստանի արեւմտյան սահմանների մոտ եւ նրանց վրա ներգործելու աշխատանքները պետք է կատարվեն հարեւան երկրի տարածքում:

Ացետիլենով գործող գազագեներատորային մեթոդի արդյունավետությունը կազմում է մինչեւ 50 տոկոս: Չնայած դրան, հենց այս մեթոդի կիրառումը մեր երկրում կառավարությունը նպատակահարմար համարեց այն ժամանակ:

Դեռ մինչ այդ, 2004-ից սկսվեց Հայաստանում գազագեներատորային հակակարկտային համակարգերի ներդրումը: Արգենտինյան SAPOI. SA ընկերության հետ կնքված պայմանագրով, Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում տեղադրվեցին 15 ացետիլենային գեներատորներ, որոնք կարկտահարությունից պաշտպանում են 1200 հա տարածք: 2007-ից այդ համակարգերը շահագործող «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ը գործարկել է նոր 15 հակակարկտային համակարգեր, որոնցով պաշտպանության տակ է վերցվել եւս 1200 հեկտար գյուղատնտեսական տարածք: Այս ընթացքում ացետիլենի փոխարեն սկսվել է կիրառվել հեղուկացված պրոպան- բութան գազախառնուրդը: Այդուհանդերձ, դեռ 2008-ին կառավարությունը այդ մեթոդը «բավականին արդյունավետ» է համարել թույլ, միջին եւ անգամ ուժեղ կարկուտների կանխման համար, բայց ոչ արդյունավետ` շատ ուժեղ եւ աղետալի կարկուտների դեպքում:

Այս ամենից հետո ոչ թե զարմանալի, այլ պարզապես զայրացուցիչ էր գազագեներատորային համակարգին նախապատվություն տալը: Չնայած դրանք ցածր արդյունավետություն ունեն, բայց մենք ընտրեցինք հենց այդ համակարգը: Չէ՞ որ այն ժամանակ գյուղնախարար **Դավիթ Լոքյանն** արդեն պայմանավորվել էր արգենտինացիների հետ նոր կայաններ ներմուծելու վերաբերյալ: Ինչպե՞ս կարելի էր հրաժարվել դրանցից` իսկ եթե հանկարծ արգենտինացիները նեղանայի՞ն: Ոչինչ իհարկե, որ մի քանի տարի անց, 2013-ին, կարկուտից ոչնչացավ Արմավիրի խաղողի ամբողջ բերքի մոտ 50 տոկոսը, չնայած հակակարկտային կայանները, **«Մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» կոչվող** ՊՈԱԿ-ի տնօրեն **Ռոբերտ Հովսեփյանի** հավաստմամբ, մոտ 30 հազար կրակոց են կատարել: Ոմանք չէին հավատում, որ այդքան կրակոց է կատարվել, որովհետեւ անկախ դրանից, բերքը ոչնչացել էր` որոշ գյուղերում` գրեթե ամբողջությամբ: Սակայն չհավատալու հիմքեր տվյալ դեպքում չկային: Գազագեներատորային համակարգն այդ ժամանակ ցույց տվեց իր բացարձակ անարդյունավետությունը` հակառակ կատարած ահռելի ծախսերի: Սակայն դա էլ դաս չեղավ:

2013-ին կառավարությունը մտադիր էր եւս 1200 նման հակակրկտային կայաններ ներմուծել եւ տեղադրել: Չգիտենք, դա տեղի ունեցավ, թե՞ ոչ, բայց, բառացիորեն վերջերս իմացանք, որ գազագեներատորային կայանների արդյունավետությունը ոչ թե 50 տոկոս է, այլ... 10 տոկոս: Այդ մասին վարչապետ Կարեն Կարապետյանին հայտնեցին արտակարգ իրավիճակների նախարարությունում նրա հետ հանդիպման ժամանակ: **Անհայտ մնաց միայն, թե նախարարությունում 9 տարի առաջ անտեղյա՞կ էին այդ մասին, կամ այդ հարցը նրանց ուղղե՞ց վարչապետը, կամ` բացի այն ժամանակվա գյուղնախարարից, որը ներկայիս տարածքային կառավարման նախարարն է, արտակարգ իրավիճակների նախարարը կամ այլ ազդեցիկ իշխանավորնե՞ր էլ էին «արգենտինացիների հետ պայմանավորվել»:**

«Այս բուտաֆորիան, որ մենք ունենք հակակարկտային համակարգ, որի էֆեկտը կրիտիկական դեպքերում, ձեր գնահատմամբ, 10 տոկոս է, անհասկանալի է` ինչո՞ւ ենք միջոցներ ծախսում, սա ոչ թե մեր, այլ վարչապետ **Կարեն Կարապետյանի** հարցադրումն էր: Արդյունավետության եւ շահավետության ցուցանիշների սոսկ համադրումը բավարար էր ճիշտ կողմնորոշվելու եւ եզրակացության հանգելու համար: Սակայն, երեւի պետք էր ահռելի ծախսեր կատարեինք, բերքի կորուստ ունենայինք, հասկանալու համար ի սկզբանե պարզն ու հասկանալին: Սրան զուգահեռ, այլ հարցադրում էլ է առաջանում` իսկ ո՞վ է պատասխանատվություն կրելու սխալ որոշման այս հետեւանքների համար եւ ինչպիսի՞ պատասխանատվություն է դա լինելու: Թեեւ դժվար է մտաբերել, թե մեր երկրում նման դեպքերի համար կոնկրետ մարդիկ` բարձրաստիճան պաշտոնյաներ, երբեւէ կոնկրետ պատասխանատվություն կրած լինեն:

## ՀԱՄԱՌՈՏ

### Դաշնակցության կարծիք(ներ)ը

Չորեքշաբթի օրը ԱԺ-ի արտահերթ նիստի օրակարգում հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ հարցերն էին: Կառավարությունն ու **Արփինե Հովհաննիսյանը** ներկայացրել էին նոր օրինագիծ, որն ըստ օրինագծերի հեղինակների «ավելի ճկուն մեխանիզմ է ձեւավորելու կոռուպցիայի դեմ պայքարում»: Հարցի շուրջ ելույթ ունեցած ՀՅԴ խմբակցության շատ երիտասարդ անդամ **Անդրանիկ Կարապետյանը**, սակայն, այլ կարծիք ունի: ԱԺ-ի ամբիոնից պատգամավոր Անդրանիկ Կարապետյանն իր անդրանիկ ելույթն է ունեցել եւ հայտարարել է, որ այս օրինագիծը «հարիր չէ հայուն», քանի որ «եվրոպական արժեհամակարգի վրա հիմնված է, եւ մեզ` հայերիս, դարձնելու է «գործ տվող»: «Այսօր մենք հայ ենք, բոլորս հայ ենք...», հայտարարել է պատգամավորը` առանց մանրամասնելու, թե բա երեկ, կամ օրինակ 100 տարի առաջ ի՞նչ էինք: Պատգամավորի խոսքով այս օրինագիծը ստեղծելու է «գործ տվողի ինստիտուտ», քանի որ, «առաջարկում է միեւնույն վայրում աշխատողներին, հարաբերությունների մեջ մտնելիս, ուշադիր լինել միմյանց նկատմամբ», իսկ նման բանը, ըստ Կարապետյանի, մեր երկրին հարիր չէ, քանի որ մենք այսօր, ինչպես նշել է պարոն Անդրանիկը, «հայապահպանության խնդիր ունենք»: Ուշագրավ է, որ ՀՅԴ խմբակցությունը, որն, ի դեպ, այս օրինագծին կողմ է, որեւէ պարզաբանող հայտարարությամբ հանդես չեկավ իր իսկ անդամի (բայց ոչ դաշնակցականի, քանի որ Կարապետյանը ՀՅԴ անդամ չէ, պատգամավոր է դարձել ՀՅԴ ռեյտինգային ցուցակով) կարծիքը կիսո՞ւմ է, թե՞ ոչ: Միայն հաջորդ օրը, ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ **Սիմոն Սիմոնեանը** հայտարարեց, որ «Անդրանիկ Կարապետյանի կարծիքն իր անձնականն է, իսկ խմբակցության կարծիքը ներկայացնում է խմբակցության ղեկավարը»:

Պարոն **Արմեն Ռուստամյանը** սակայն լուռ է:

### Ո՞ւմ է տեսել դեսպան Սվիտալսկին

ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը չորեքշաբթի օրն ընդունել է Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Սվիտալսկուն:

**Բաբլոյանը** նշել է, որ ինքը, որպես ԱԺ նոր նախագահ, վերահաստատում է, որ Հայաստանը շահագրգռված է բոլոր ոլորտներում խորացնել գործակցությունը ԵՄ-ի հետ: ԱԺ նախագահն ընդգծել է, որ Հայաստանն ու Եվրոպան միեւնույն արժեհամակարգը կրողներ են:

**Սվիտալսկին**, իր հերթին, նշել է, որ Երեւանում իր հարաստեւ աշխատանքի ընթացքում ինքը հասկացել է, որ հայերն ավելի եվրոպացի են, քան ԵՄ-ի անդամ որոշ երկրների ներկայացուցիչներ: Թե կոնկրետ ո՞ր երկրների, դեսպանը չի մանրամասնել: Սվիտալսկին, ցավոք, նաեւ չի նշել, թե ինքը Հայաստանում ո՞ւմ է կոնկրետ հանդիպել, որից ստացել է նման տպավորություն: Ի դեպ, մեր երկրում Չինաստանի դեսպան **Թիան Էրլունը** Առաջին ալիքին տված հարցազրույցում նշել է, որ շատ է սիրում երեկոյան ժամերին զբոսնել Երեւանի կենտրոնում...Բայց սա` իմիջիայլոց:

### Քուրդիստա՞ն

Սեպտեմբերի 25-ին Իրաքի քրդերը անկախության հանրաքվե կանցկացնեն: Այս մասին հայտնում է քրդական ամենախոշոր կայքերից Rudaw-ը: Հանրաքվեի օրը որոշվել է Իրաքի քրդերի ղեկավար Մասուդ Բարզանիի եւ տեղի քրդական կուսակցությունների (ի դեմ) ղեկավարների խորհրդակցության ժամանակ: Իրաքի վարչապետ **Հայդեր ալ Աբադին**, ի պատասխան հիշեցրել է քրդերին, որ նրանք անկախանալու համար չափազանց բարդ տարածաշրջանում են ապրում. «Ձեր խնդիրները լուծվելո՞ւ են ձեր անկախությամբ. պետք է նախ եւ առաջ հաշվի առնել քուրդ ժողովրդի շահը», ասել է Իրաքի վարչապետը:

Պատրաստեց` ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆԸ

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

# «Ո՞ւր է գնում Եվրոպան»

Արձագանքելով Եվրոպայի քրիստոնեազերծման, եկեղեցիների վերացման վերաբերյալ իմ մի հոդվածին, «Ազգ»-ի հեղինակներից Հակոբ Միքայելյանը (ինչքան հասկացա՝ սփյուռքից) հարցնում է, թե որո՞նք են նման կործանարար երեւույթի պատճառները, եւ ո՞ւր է գնում Եվրոպան:

Եթե խոսքը վերաբերում է մի ամբողջ հսկայական քրիստոնեական քաղաքակրթության ոչնչացմանը, ինչի մասին վկայում են նույն արեւմտյան բազմաթիվ հետազոտական կենտրոններ, ապա ուրեմն պետք է խոսել մայր ցամաքի այլափոխման, այլակերպման ինչ-որ համաշխարհային ծրագրի մասին: Եվ այստեղ հնարավոր չէ տուրք չտալ նաեւ զանազան կոնսպիրոլոգիական՝ գաղտնէաբանական տեսություններին:

Խնդիրը համապարփակ է եւ հանգում է անդրկուլիսյան համաշխարհային կազմակերպությունների՝ Համաշխարհային կառավարության, անդրազգային (տրանսնացիոնալ) կորպորացիաների, Բիլդերբերգյան ակումբի, Եռակողմ հանձնաժողովի, Հռոմի ակումբի եւ այլոց գործունեությանը: Քանի որ Ռուսաստանում այս կամ այն չափով առկա է անտիսեմիտիզմը, ապա, ըստ ռուս փորձագետների, այդ կազմակերպությունների միջուկը՝ մոտ 60 տոկոսը կազմում են հրեաները՝ քաղաքական ու կրոնական հայտնի գործիչներ, բանկիրներ, մասոններ եւ այլք:

Ո՞րն է համաշխարհային նոր կարգի հաստատման գաղափարախոսությունը՝ կրճատել մոլորակի բնակչության քանակը, հասցնելով այն «ոսկե միլիարդի», ստեղծել մարդու պրիմիտիվացված նոր տիպ, որը կորցրել է իր հարուստ մշակութային, բարոյական ու հոգեւոր արժեքները եւ կողմնորոշվում է դեպի սոսկ նյութական բարեկեցությունն ու անձնական բարեհարմարությունները: Մարդ, որը չունի ազգություն, ընտանիք, հավատք, հայրենիք: «Արեւմտյան դեմոկրատիան » բոլոր պայմանները ստեղծել է նման մարդու առաջացման համար: Երկհազարամյա քրիստոնեության ոչնչացումը Եվրոպայում այդ խոշոր ծրագրի բաղկացուցիչ մասն է:

Առհասարակ ժամանակակից Եվրոպայի օրինակը ցույց է տալիս, որ գլոբալիստական նման ծրագիր իրոք գոյություն ունի: Հայտնի փաստ է՝ այն ժողովուրդները, որոնք քարոզում են արտամուսնական սեռական այլասերվածություններ, չեն կարող բազմանալ եւ դատապարտված են ինքնաոչնչացման: Ըստ որոշ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների, Եվրոպան քաղաքականապես կանհետանա առաջիկա 50 տարում, ժողովրդագրական առումով՝ մեկ դարում: «Եվրոպացին, գրում է ամերիկացի սոցիոլոգ **Պատրիկ Ֆեգենը**, նման է հարբեցողի կամ թմրամոլի, որը չի ուզում ճանաչել իր արատները: Թեեւ բոլորն են տեսնում, որ նա ահավոր դեգրադացիայի է ենթարկվում: 100 տարի հետո Եվրոպան կդառնա աֆրոմուսուլմանական»:

Տարակուսանք է առաջացնում մի հանգամանք՝ ինչո՞ւ աշխարհի գերհզորները իրենց չարագուշակ պլանների իրագործումը սկսել են հենց քրիստոնեական աշխարհամասից: Ի վերջո Եվրոպան որպես աշխարհագրական մայր ցամաք չի անհետանում, անհետանում է քրիստոնեական քաղաքակրթությունը: Անշուշտ հառնում են զանազան «եթե»-ներ, որ, ո՞վ գիտե, մի օր կհայտնվեն քրիստոնյա արմատականներ ու վերջ կտան իրենց երկիրը զավթող իսլամական ջիհադին: Սակայն ներկայիս եվրոբյուրոկրատիան այնքան է այլասերված իր իսկ ստեղծած «նորագույն արժեքներով», որ ոչ ուզում է, ոչ էլ ընդունակ է դիմադրության:

Նախորդ հոդվածում (տես՝ «Ազգ», մայիսի 26) բերված էին եվրոպական հարյուրավոր եկեղեցիների փակման տվյալներ: Ավելացնենք, որ դրանց փոխարեն բացվում են գրեթե նույնքան մզկիթներ՝ եվրոպացիների աչքի առաջ ու նրանց թողտվությամբ ու աջակցությամբ: Վերջերս Սիրիայի ասորիների ներկայացուցիչները եկել էին Մոսկվա խնդրելու Պուտինին, որ նա աջակցի այդ երկրում նրա երբեմնի տիրակալներին կոմպակտ ապրելու հնարավորություն ստեղծելու հարցում: Նույնիսկ ինքնավարություն էլ չէին պահանջում, քրդերի պես:Ասացեք, խնդրեմ, Եվրոմիության անդամ ո՞ր երկրի ղեկավարն է ցավ, դառնություն կամ ափսոսանք հայտնել մերձավորարեւելյան տարածաշրջանից՝ քրիստոնեության երբեմնի բնօրրանից քրիստոնյաների զանգվածային արտահոսքի կապակցությամբ:

Նորերս առիթ եղավ զրուցելու գերմանացի մի զբոսաշրջիկի հետ: Իմ այն հարցին, թե ինչու են գերմանացիները իրենց երկրում տեղ տալիս թուրքերին, հենց թուրքերին, լռեց: Նույնիսկ նրա հայուհի կինը, որ թարգմանչի դեր էր կատարում, նեղսրտեց, թե գերմանացիների մեջ ընդունված չէ քննարկել միգրանտների հարցը, նրանք «տոլերանտ են»՝ հանդուրժողական: Այդ նույն Գերմանիայում իրաքցի մի ներգաղթյալ վերջերս բռնաբարել էր տասնամյա մի երեխայի: Դատարանը հանգել էր այն «հետեւության», որ իրաքցին գերմաներեն չի իմացել ու չի հասկացել, որ պատանին չի ուզեցել... բռնաբարվել:

Հարգարժան Հակոբ Միքայելյանի այն հարցին, թե ո՞ւր է գնում Եվրոպան, հազիվ թե որեւէ մեկը պատասխանի: Այսօրվա տվյալներով, ինչպես ասվեց, դեպի կործանում: Այս թեմայով հրապարակումների մեջ «լավատես են» միայն եվրոպացիները, այն էլ ոչ բոլորը: Հեռուստատեսային մի հաղորդման ժամանակ ռուս մեկը, որը մինչ այդ եղել էր Հոլանդիայում, պատմեց, որ մայրաքաղաքի մետրոյի մուտքի մոտ տեսել էր կրքոտ համբուրվող երկու աղջկա, իսկ դուրս գալիս քիչ էր մնացել բախվի նույն կեցվածքով երկու արուների: Եվ ինչն էր ամենից շատ ապշեցրել նրան՝ որ երկու դեպքում էլ բացարձակապես ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրանց վրա:

Լավ, մեր դարդերը քիչ են, Եվրոպայի՞նն էլ ենք մեզ վրա վերցնում, կասեն Հայաստանում: Ճիշտ է, բայց չէ որ երբեմն հարկադրված, երբեմն էլ կուրորեն (քաղաքակիրթ երեւալու նկատառումով) մենք ընդօրինակում-վերցնում ենք եվրոպական տխրահռչակ շատ «արժեքներ»: Կարո՞ղ եք պատկերացնել, որ ողբալի մի օր հանկարծ Հայաստանում շրջանառությունից հանեն «հայրիկ» ու «մայրիկ» նվիրական անունները ու... համարակալեն ծնողներին:

# Հրեշտակներ՝ հակակոռուպցիոն հանձնաժողովի համար

⇨1

Իհարկե, եթե սա հերթական ցուցափեղկն է՝ Սահմանադրության փոփոխությունների պահանջներին ի տրիտուր եւ եվրոպաների աչքին յուղ քսող՝ դե, հա, մի կերպ կհասկանանք ու մի կերպ կտանենք նոր, անարդյունավետ կառույցի ստեղծումը: Եթե, այնուամենայնիվ, այս փաթեթի ընդունման հույսին են մնացել՝ բյուջեի ծակերից եւս մեկ-երկուսը այս կառույցի շնորհիվ փակելու, քանի որ հենց նախագծում կա այսպիսի միտք, թե՝ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել դրական, ապա, ուրեմն, ամեն ինչ շատ ավելի ողբերգական է, քան բոլորս պատկերացնում ենք: Քանի որ մարդկանց՝ միմյանց վերաբերյալ, կարելի է ասել անգամ, մատնագրեր գրելու պայմանով են ուզում բյուջե վերադարձնել կոռուպցիայի փողերը՝ անձնական ատելության սերմանման, անառողջ հարաբերությունների բուծման ֆոնին: Իսկ միթե ավելի հեշտ եւ ուղիղ ճանապարհ չէ՞ր պետության կառուցվածքներն ըստ էության աշխատեցնելը: Եթե ամեն ոք իրապես կատարեր իր պարտականությունները, եթե սարսափելի ուռճացված մեր պետական համակարգի համապատասխան թվախեղդ ստորաբաժանումները գործեին՝ միթե զանազան անարդյունավետ էթիկայի հանձնաժողովների, հիմա էլ կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովի անհրաժեշտությունը կլինե՞ր: Որքան գիտեմ՝ Վրաստանում այդպիսի կառույցներ չեն ստեղծվել, մինչդեռ օրերս Վրաստանը պաշտոնապես զեկուցեց Եվրոպային, թե այդ երկրում կոռուպցիայի հարցը կարելի է լուծված համարել, կոռուպցիա չկա, քանի որ թափանցիկ եւ արդյունավետ են աշխատում ոստիկանությունը, դատական համակարգը, արդարադատությունը: Կամ միթե էն գլխից պարզ չէ, որ եթե վերեւից ուզենան կոռուպցիայի ու կաշառակերության հարցերը լուծել՝ դա մի քանի օրում եւ անհջապես տեղի կունենա, քանի որ պետական պաշտոնյան, համոզված լինելով, որ իր ձեռքը բռնելու են, եւ ոչ թե այդ ձեռքից փայ են ուզելու, կդողա իր աշխատավարձի վրա ու հազիվ թե գնա կոռուպցիոն սխեմայի: Ով չգիտե, կամ արդյոք Հայաստանում ընդհանրապես որեւէ մեկի համար գաղտնի՞ք է, որ կոռուպցիոն սխեմաները հովանավորվում են վերեւներից, գումարները հոսում են բրգաձեւ դեպի վեր, ամեն ինչ՝ բիզնես-քվոտա, պայմանագիր, պաշտոն դատարկ տեղը չի առաջանում, այլ որոշակի ծառայության կամ շահի դիմաց, հետագայում հենց այդ սխեմաներն իրականացնելու պատրաստակամության բանավոր պայմանագրով:

Հիմա որեւէ բա՞ն է փոխվել, որ հանձնաժողով ստեղծելով հարց լուծելու պատրանք է առաջարկվում: Առաջ, որ համատարած կոռուպցիայից էինք խոսում, հատկապես լրագրողներիս կտրում էին, թե՝ անուն ասեք, կարծես թե անզեն աչքով չէր երեւում, որ 300 հազ. դրամ ստացող պաշտոնյան 100 հազ. դոլարանոց մեքենայով կամ 20 հազ. դոլարանոց կոստյումով շրջելով՝ ինքն է հենց անունը, հենց ինքն է ազդարարի համակարգը, ազդարարելով, որ բնական աշխատավարձով այդպիսի թանկարժեքություններով չէր կարող զարդարել իրեն, կամ չէր կարող ունենալ մի քանի միլիոն դոլարանոց դղյակ ու առանձնատուն: Է, ուսումնասիրեիք, պարզեիք, տեսնեմ՝ էլ ո՞վ կհամարձակվեր կաշառք վերցնել կամ կոռուպցիոն սխեմայի մասնակիցը դառնալ: Չեք արել, չէ՞, բա դե հիմա ինչ... գիտահետազոտակա՞ն, ի՞նչ քաղաքական կամք, ասեք՝ հերթական իմիտացիան է, Եվրոպան թռչնակ կդնի, մի քանի հազար դոլար գրանտ էլ կտա, բայց հարցնող լինի՝ մարդկանց ինչո՞ւ եք իրար դեմ հանում, թշնամացնում:

Ես բռնադատվածի թոռ եմ, իմ պապին դատել ու գնդակահարել են կեղծ մատնագրով, ես դա չեմ մոռանա եւ մատնագիր գրողին չեմ ների երբեք, դա կփոխանցեմ իմ թոռներին: Հիմա ասում եք ՝ ազդարարի ինստիտուտ, վարձատրությա՛մբ, դրա դեմ խոսողին կուրծք ծեծելով դատափետում եք (ուրիշ բան, որ Ազգային ժողով չպետք է գան կասկածելի հայացքներով մարդիկ), բայց չէ որ ճիշտ էր **Սամվել Ֆարմանյանը**՝ կլինեն շատերը, որոնք ոչ թե կոռուպցիայի դեմ ազնիվ պայքարի վեհ մղումներից ելնելով, այլ իր չսիրած հարեւանին կամ գործընկերոջը շարքից հանելու համար մատնագրեր կգրեն, ու մինչեւ տվյալ հարեւանին կամ պաշտոնյային արդարացնեն, տվյալ մարդկանց կոռուպցիոն նկարագրի մասին արտահոսքը մամուլում կանի իր սեւ գործը. դրա դեմ ի՞նչ եք անելու:

Եթե իսկապես մտադիր եք կոռուպցիայի դեմ պայքարել՝ սկսեք ոչ թե հանձնաժողով ստեղծելուց, այլ՝ տարրական բաներից. հրաժարվեք ստվերային վարձատրությունների տխուր պրակտիկայից, որոնք շատ լավ գիտեք, որ տարբեր պետական կառույցներում կան, հրաժարվեք սեփական վարորդների կանանց կամ փեսաներին աշխատանքի նշանակելուց՝ որպես լավություն, հրաժարվեք քաղաքական լայն կոռուպցիայից՝ միայն սեփական կուսակիցներին պաշտոնների նշանակելով, հրաժարվեք նախարարությունների պահուստային ֆոնդերից՝ դրանք կոռուպցիայի բուն են, ուսումնասիրեք եւ պատժեք դատական համակարգի՝ կոռուպցիոն սակագների սանդղակներով աշխատող բոլոր մասնակիցներին, չէ՞ որ ամեն դատավորից կարող եք իմանալ այս կամ այն վճռի արժեքը, դա չի կարող ինքնագլուխ արվել, շրջանառվող գումարների հսկա թվերը կոտորակվում են դեպի վեր աստիճանահարթակի տարբեր մակարդակներում: Մի խոսքով՝ պետության կառուցվածքներն աշխատեցրեք: Երբ կոռուպցիայի դեմ պայքարի հայտարարությունն ուղեկցվի կոնկրետ ամեն մեկին եւ յուրաքանչյուրին կարգի հրավիրելու գործնական, կրկնում ենք՝ գործնական միջամտությամբ, եւ ոչ թե հակառակը՝ դրանից մաս լիզելու ակնկալությամբ, հավատացած եմ, կոռուպցիոն սխեմաների հետքն անգամ չի մնա Հայաստանում: Բնականաբար՝ կոռուպցիոներների համար գրավիչ չեն լինի նաեւ պետական պաշտոնները, որոնց տիրապետողները կարճ ժամանակում դառնում են արտոնյալ խավ՝ քվոտային բիզնեսների եւ համապատասխան ահռելի ունեցվածքների տիրապետմամբ, որոնց հիմքում ամենեւին էլ աշխատավարձերը չեն:

Կամ որ գրում եք՝ հանձնաժողովի անդամը պետք է քաղաքական չեզոքություն պահի, բացատրեք՝ ոնց պետք է պահի, երբ նրան քաղաքական մեծամասնությունն է նշանակում: Հենց քաղաքական չեզոքություն պահի՝ կհանեն -ռադ կանեն...հիվանդության պատճառով, ինչքան էլ հանձնաժողովի անդամը վեց տարով է ընտրվելու: Կամ՝ անկողմնակալ հանձնաժողով ո՞նց պետք է լինի՝ մեր կյանքում ուրիշ օրինա՞կ եք տեսել, բացի մրցակից եւ հակառակորդ շահեր ներկայացնող մարդկանց շարքից հանելը կենսակերպ դարձնելուց, էս մի հանձնաժողովը ինչու պիտի տարբեր լինի, հո լուսնի վրա չի գործելու, թարմ օրինակը դուք չտվեցի՞ք՝ **Իշխան Զաքարյանի** կնոջը քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետի պաշտոնից ազատելով:

Իսկ այնպես՝ ԱԺ փոխնախագահի եւ կառավարության հետ համատեղ այս օրենքի համահեղինակ **Արփինե Հովհաննիսյանին** մենք էլ ենք հավան, նրա գիտելիքներին էլ չենք կասկածում, սակայն անձնական համակրանքը տվյալ դեպքում չի կարող հիմք լինել, որ թերահավատություն չհայտնենք հերթական անարդյունավետ հանձնաժողովի ստեղծման եւ կոռուպցիայի դեմ պայքարի հերթական իմիտացիայի վերաբերյալ: Հակառակը կլինի՝ պատրաստ ենք ընդունել մեր սխալը եւ ուրախանալ օրենքի հեղինակների հետ միասին:

AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 5



ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Թե ինչպե՞ս «Կատարը» դարձավ Քաթար

Մայիսի 14-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով մեկնեց Քաթարի պետություն: Մայրաքաղաք Դոհայի օդանավակայանում բարձր մակարդակի ընդունելության արժանանալուց հետո, արդեն հաջորդ օրը՝ մայիսի 15-ին, Սերժ Սարգսյանին ընդունեց եւ նրա հետ առանձնազրույց ունեցավ Քաթարի էմիր Թամիմ բին Համադ ալ Թանին: Մինչ այդ, էմիրի դիվանում տեղի էր ունեցել ՀՀ նախագահի ընդունելության արարողություն, որն, ինչպես ականատեսներն են պատմում, ոչ պակաս մեծ շուքով է անցել, որքան Դոհայի օդանավակայանում ընդունելությունը: Պատահական չէ, որ Սերժ Սարգսյանը էմիրին շնորհակալություն է հայտնել այդքան ջերմ ընդունելության համար եւ նրան հրավիրել է Հայաստան: Էմիրն ընդունել է հրավերը եւ մոտ ապագայում կժամանի մեր երկիր:

Շատ կարեւոր է, որ էմիրի հետ զրույցում ՀՀ նախագահը շեշտել է, որ ինքը Քաթարում է, քանի որ Հայաստանն անչափ կարեւորում է արաբական աշխարհի հետ շփումները, հարաբերությունների զարգացումը, որոնք, ի դեպ, դարերի պատմություն ունեն եւ միշտ էլ Հայաստանի համար եղել են առանձնահատուկ: Կոնկրետ Քաթարի հետ, ինչպես նշել է նախագահը, ՀՀ-ն շահագրգռված է քաղաքական բարձր մակարդակի երկխոսության ակտիվացմամբ եւ բոլոր ոլորտներում հարաբերությունների խորացմամբ:

Բարձրաստիճան զրուցակիցները հատուկ շեշտել են, որ տարեց տարի ավելանում է Ծոցի երկրներից, հատկապես Քաթարից Հայաստան եկող զբոսաշրջիկների թիվը եւ այս համատեքստում քննարկել են մուտքի երկկողմ ազատականացման մասին համաձայնագիրը:

Մի անչափ կարեւոր դրվագ եւս. հանդիպումից հետո, ի պատիվ ՀՀ նախագահի, էմիր Թամիմ բին Համադ ալ Թանիի անունից տրվել է պաշտոնական ճաշ: Շատ համեղ:




Նույն օրը Սերժ Սարգսյանը Քաթարում հանդիպել է «Քաթար էյրուեյզ» ավիաընկերության գործադիր տնօրեն Աքբար ալ Բաքրիի հետ: Իմիջիայլոց, այս ավիաընկերությունը 2016-ի մայիսից իրականացնում է կանոնավոր ավիափոխադրումներ Երեւան-Դոհա-Երեւան ուղղությամբ: Հայաստանի նախագահը Ալ Բաքրիին ասել է, որ Հայաստանը կողջունի եւ կաջակցի մեր տնտեսության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ ավիացիոն բնագավառում քաթարցի ներդրողներին: Հենց այս խոսքի վրա էլ, Ալ Բաքրին ասել է, որ ինքն արդեն իսկ Քաթարի էմիր, Նորին Գերազանցություն Թամիմ բին Համադ Ալ Թանիից ստացել է հատուկ հանձնարարություն Հայաստանի հետ փոխգործակցությունը զարգացնելու վերաբերյալ եւ վստահեցրել է, որ ինքն անձամբ կանի ամեն ինչ, որպեսզի կատարի էմիրի հանձնարարությունը: Ալ Բաքրին, իր հերթին ասել է, որ ինքը տեսնում է Հայաստանի հետ փոխգործակցության զարգացման հնարավորություն:

Հիմա դուք հավանաբար կզարմանաք, թե ինչո՞ւ եմ Հայաստանի նախագահի՝ մեկ ամիս առաջ Քաթար կատարած այցին հիմա անդրադառնում: Բանն այն է, որ այս օրերին 7 երկիր, որոնցից 6-ը՝ արաբական, Քաթարի հետ խզեցին դիվանագիտական կապերը: Այդ երկրներն են Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Բահրեյնը, Եմենը, Լիբիան (ի դեմս՝ անցումային կառավարության), եւ Մալդիվյան կղզիները: Բոլոր այս երկրները Քաթարից հետ են կանչել իրենց դիվանագետներին ու քաղաքացիներին: Ինչպես նշում են հիշյալ երկրները, իրենք Քաթարի հետ խզում են հարաբերությունները (ոչ միայն դիվանագիտական), քանի որ Քաթարը, ուշադրություն, «2012-ից ի վեր «Մուսուլման եղբայրներ» շարժման լիբիական մասնաճյուղի եւ այլ իսլամիստական ահաբեկչական խմբավորումների զենքի մատակարարման հիմնական աղբյուրն է եւ վտանգ է ներկայացնում արաբական աշխարհի ազգային անվտանգությանը»:

Այս իրարանցումից հետո ԱՄՆ պետքարտուղար Թիլերսոնը արաբական աշխարհին համախմբելու կոչով հանդես եկավ, նշելով, որ այդ համախմբումն անչափ կարեւոր է տարածաշրջանի եւ առհասարակ ողջ աշխարհի համար: Իմիջիայլոց, Քաթարի մեկուսացումից հետո, նավթը թանկացավ ու հավանաբար հենց սա է առավելաբար անհանգստացրել պարոն Թիլերսոնին: Իսկ ՌԴ ԱԳ նախարար Լավրովը հայտարարեց, որ Ռուսաստանը անհրաժեշտ չի համարում միջամտել արաբական աշխարհի իրադարձություններին: Հայտարարությամբ հանդես եկավ նաեւ Քաթարն ինքը: Այդ երկրի ԱԳՆ-ն սոցցանցի իր էջում նշեց, որ Քաթարին ուղղված արաբական աշխարհի բոլոր մեղադրանքները անհիմն են: Իսկ այդ հայտարարությունների անհիմն լինելու հիմքերը Քաթարն, իհարկե, չներկայացրեց:

Հիմա՝ ամենակարեւորի մասին: Չգիտե՞ր արդյոք Հայաստանը, Բաղրամյան 26-ում աշխատող ինչ-որ մեկը, մանավանդ նախագահի համար լուրջ աշխարհաքաղաքական վերլուծություններ ներկայացնող հմուտ եւ բանիմաց փորձագետներից որեւէ մեկը, որ Քաթարը 2012-ից ի վեր... Լավ, ենթադրենք արաբական աշխարհը սխալվում է, որ Քաթարն ամենեւին էլ ահաբեկիչներին չի աջակցում, այն էլ՝ զենքով, բայց Բաղրամյան 26-ում չգիտեի՞ն, չէի՞ն զգում, կանխատեսում, հասկանում, որ արաբական աշխարհը շուտով մեկուսացնելու է Քաթարին, եւ այն, որ այդ երկիրը համարվում է «Ծոցի մարգարիտ», չի փրկելու իրեն: Եթե չգիտեին, ուրեմն այդ փորձագետներն ամենեւին էլ հմուտ չեն, ինչը տվյալ պարագայում կարող է անչափ ծիծաղելի ու անհարմար դրության մեջ դնել Հայաստանին, իսկ եթե գիտեին, ուրեմն ինչո՞ւ չեն ասել նախագահին, որպեսզի Հայաստանը ծիծաղելի եւ անհարմար դրության մեջ չհայտնվի: Գոնե Քաթարի հետ ազատ ելումուտ սահմանող միջպետական համաձայնագրի ժամանակ մեկն ասեր՝ պետք չէ ստորագրել...

Դուք՝ չգիտեմ, բայց ես հակված եմ այն մտքին, որ նախագահի համար աշխատող փորձագետների բանակը չի իմացել, որ Քաթարը, մեղմ ասած, «կասկածելի» երկիր է, կամ էլ իմացել է, բայց չի ասել: Ունեմ անգամ դրա ապացույցը: Բանն այն է, որ արաբական այդ երկիրը հայերեն գրվում է Քաթար, ոչ թե Կատար, ինչպես գրված է ՀՀ նախագահի պաշտոնական կայքէջում: Ու եթե Բաղրամյան 26-ում չգիտեն, թե ինչպե՞ս է հայերեն ճիշտ գրվում Քաթարը, ուրեմն որտեղի՞ց իմանան, որ այդ երկիրը 2012-ից ի վեր... Չնայած, չի բացառվում, որ նախագահի կայքը հատուկ դիվանագիտական հնարք է կիրառել՝ այդ երկրին կոչելով Կատար: Եթե որեւէ մեկը ծիծաղի Հայաստանի վրա, կամ պահանջի խզել կապերը Քաթարի հետ, Հայաստանն էլ կարող է հայտարարել, որ ինքը կապված է ոչ թե Քաթարի հետ, այլ Կատարի...

Սպասենք Նորին Գերազանցություն էմիր Թամիմ բին Համադ ալ Թանիի փոխադարձ այցին Հայաստան, որն անպայման կգա, մանավանդ, որ գնալու տեղ առանձնապես չունի հիմա: Իսկ մինչ այդ քաթարցիներն ազատ ելումուտ կանեն մեր երկիր, քանի որ Հայաստանն անչափ կարեւորում է արաբական աշխարհի, կրկնում եմ, արաբական աշխարհի հետ հարաբերությունների զարգացումն ու այդ աշխարհի հետ դարավոր բարեկամական կապերի ամրապնդումը:

***Խմբ. կողմից-*** *Համաձայն չենք մեր աշխատակցի հնչեցրած մեղադրանքին, թե պաշտոնական Երեւանը մայիսի կեսերին պետք է իմանար, բայց չի իմացել, թե ինչ է կատարվելու Քաթարի հետ: Բայց անշուշտ համաձայն ենք, որ հայերեն պետք է գրել «Քաթար» եւ ոչ թե ռուսերենից տառադարձելով՝ «Կատար»: Իրենք՝ արաբները գրում են Ղաթար (ընդ որում՝ կոշտ «թ» ով), իսկ անգլերեն ու ֆրանսերեն՝ Qatar:*

# Մարդիկ, ի տարբերություն կենդանիների, խաբում են

Անցած կիրակի օրը երեք տարեկան դստերս հետ գնացինք Երեւանի կենդանաբանական այգի: Ու քանի որ դա փոքրիկիս երկրորդ այցն էր այգի, որոշել էինք նախօրոք պատրաստել նրան, որ այնտեղ տեսնելու է իր այդքան սիրած արջուկներին, առյուծներին, վագրին, փղին, գայլերին, եւ իհարկե կապիկներին, զեբրին եւ այլն: Անկեղծ ասած, նախքան գնալը չենք այցելել Երեւանի կենդանաբանական այգու կայքէջ, նախ քանի որ այգու հասցեն գիտենք, գիտենք նաեւ, որ աշխատում է, բացի այդ ո՞վ է կենդանաբանական այգի գնալուց առաջ այցելում այգու կայքէջ:

Ինչեւէ: Հասանք մուտքին, որտեղ բարձրախոսը հայտարարում էր. «Հարգելի այցելուներ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, կենդանաբանական այգու որոշ հատվածներ փակ են այցելուների համար: Հայցում ենք ձեր ներողամտությունը»: Ուշադրություն դարձրեցինք, իհարկե, հայտարարությանը, բայց չկարեւորեցինք այն, քանի որ ինչպես այնտեղ էր ասվում՝ այգու միայն որոշ հատվածներն էին փակ: Գնեցինք երկու տոմս (դուստրս առանց տոմսի է մտնում), վճարեցինք յուրաքանչյուրի համար 1200 դրամ եւ մտանք ներս: Տեսանք կարապների՝ սեւ եւ սպիտակ, արջերի, կապիկներին, որոնք չնայած սովոր են շոգին, բայց երեւանյան շոգից մի տեսակ շատ խեղճ տեսք ունեին, եղնիկների, որոնց չնայած կերակրել չի կարելի, բայց այցելուներից մեկը դաժանաբար կերակրում էր: Դաժանաբար, քանի որ իրականում չէր կերակրում, այլ թխվածքաբլիթը մոտեցնում էր սոված կենդանու դնչին, ապա հեռու տանում... Տեսանք նաեւ անգղերին, մի ագռավ, գետաձիին եւ վերջ. կենդանաբանական այգու ոչ թե որոշ, այլ մեծ մասը, այնտեղ որտեղ գայլերն են, առյուծներն են, վագրը, եւ մյուս էկզոտիկ կենդանիները, փակ էին այցելուների համար:

Ու մինչ ես փորձում էի հասկանալ, թե հիմա խաբվե՞լ ենք արդյոք, թե՞ ոչ, դուստրս հանկարծ հարցրեց. «Բա գազանանոցը որտե՞ղ է»: Քանի որ չկարողացա նրան պատասխանել, հասկացա, որ խաբվել ենք: Մենք՝ ոչինչ, դուստրս:

Կարելի՞ էր արդյոք նախօրոք տեղյակ պահել այցելուներին, որ գազանանոցի մի մասը փակ է: Իհարկե կարելի էր: Մեզ հայտնեցին, որ իրենց կայքում գրել են, որ կենդանաբանական այգու մի մասում շինարարական աշխատանքներ են, որոնց պատճառով էլ այգու որոշ հատվածները փակ են: Բայց պարտավո՞ր է այցելուն կենդանաբանական այգի գալուց առաջ մտնել այգու կայքը, իմ կարծիքով՝ ոչ, հետեւաբար սա իրազեկման արդյունավե՞տ ձեւ է... Բացի այդ, այգու որո՞շ հատվածներն են փակ, թե՞ այգու մեծ մասը: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ որոշ հատվածները, ըստ ականատեսիս՝ մեծ մասը: Եւ, հնարավո՞ր չէր արդյոք այդ շինարարարական աշխատանքները սկսել ու ավարտել նախքան հունիսի 1-ը, որը համարվում է կենդանաբանական այգու բացման օր: Իսկ եթե հնարավոր չէր, ապա ինչո՞ւ է այգու փոքրիկ մասը միայն բացվել, այն պարագայում, երբ մեծ մասում շինարարարական աշխատանքներ են եւ այգին, մեծ հաշվով, փակ է:

Ու մի մանրուք եւս: Կենդանաբանական այգու մեկ տոմսն արժե 1200 դրամ: Թանկ է, թե՞ էժան, այլ հարց է, կարեւորն այն է, որ կենդանաբանական լիարժեք գործող այգի մտնելիս վճարում ես 1200 դրամ: Իսկ ինչո՞ւ է այգու տնօրենությունը նույն գինը պահպանել, երբ այգու մեծ մասը փակ է, որ խաբի՞...

Ի դեպ, կենդանաբանական այգու տարածքում տեղադրված անվճար մանկական սղարանները ցեխոտ են, այգու տնօրենությունն այդ մասին հատուկ հայտարարություն չի պատրաստել, բայց ես ասեմ. «Հարգելի այցելուներ, շինարարական աշխատանքների հետ կապված՝ այգու մեծ մասը փակ է այցելուների համար: Բացի այդ, խնդրում ենք Ձեր երեխաներին այգի բերել ոչ սպիտակ կամ բաց գույնի հագուստով, քանի որ մեր տարածքում տեղադրված սղարանները ցեխոտ են եւ նրանց շորիկները կարող են սաստիկ կեղտոտվել: Հայցում ենք ձեր ներողամտությունը»:

Դրանից հետո մենք երեւի մեզ խաբված չզգայինք: Իսկ մեր երեխանե՞րը...

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Վrաստանի չուշացած պատասխանը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ստեփանակերտ

Մեr նախորդ հոդվածում (http://www.azg.am/AM/2017060205) կարծիf էինf հայտնել, nr ադrբեջանցի լrագrող Աֆղան Մուխտաrլիի առեւանգման hետ կապված դեպfը սեւ բիծ է Վrաստանի դեմfին, nrը մաfrելու համար ժամանակ եւ ահռելի ջանfեr են պետf լինելու: Խոստովանենf, nr թեrագնահատելի էինf hաrեւան եrկrի hաստատակամությունը, նrա իշխանությունների ոպեrատիվությունը:

Անցել է մեկ շաբաթից էլ պակաս ժամանակ, իսկ արդեն hայտնի է, nr Մուխտաrլիի գոrծով hատուկ hայտաrաrություն է տաrածել Վrաստանի վաrչապետ **Կվիrիկաշվիլին**: Ի մասնավոrի, նա ասել է, nr այն hաrված է hասցնում եrկrի hեղինակությանը: «Կատաrվածի կապակցությամբ hետաfննություն է սկսված, եւ մեr պետության շահն է, nrպեսզի գոrծընթացը լինի առավելագույնս թափանցիկ: Այդ իսկ պատճառով իrավապահ կառույցնեrը ակտիվ կոմունիկացիաների մեջ են ինչպես միջազգային կազմակեrպությունների, այնպես էլ դիվանագիտական կոrպուսի նեrկայացուցիչների hետ եւ աrտահայտում են բաց համագոrծակցության պատrաստակամություն»,- ասված է Վrաստանի վաrչապետի hայտաrաrության մեջ, nrը փոխանցել է «Թուrան» գոrծակալությունը: (http://www.contact.az/ext/news/2017/6/free/politics%20news/ru/62865.htm)

Ճիշտ է, նrա խոսfից hասկացվում է, nr վrացական իշխանությունները գոrծում են միջազգային կազմակեrպությունների եւ Թբիլիսիում hավատաrմագrված դիվանագիտական կոrպուսի առանձին նեrկայացուցիչների, ամենայն hավանականությամբ՝ աrեւմտյան եrկrնեrից, լուrջ անhանգստության համատեfստում, բայց տվյալ պահին պետf չէ մտասեւեռվել դrա վrա: Գլխավոrն այն է, nr Թբիլիսիի՝ Բաfվին hասցեագrված պատասխանը չի ուշացել եւ hնչել է այն պահին, եrբ եrկու եrկrնեrը Թուrfիայի hետ միասին hամատեղ զոrավաrժություններ են անցկացնում: Այդ մասին է, hավանաբաr, Վrաստանի վաrչապետի hետեւյալ ակնաrկը. «Մենf բավական բաrդ ճանապաrh ենf անցել եւ hանդիսանում ենf իrավական, ժողովrդավաrական եrկիr, nrը ձգտում է եվrոպական եւ եվrոատլանտյան կառույցնեrին, կիսում նrանց աrժեfները, ճանաչում օrենfի գեrակայությունը եւ պաշտպանում մաrդու իrավունfները: Մենf ոչ մի գնի դիմաց չենf զիջի այդ նվաճումները եւ ամեն ինչ կանենf, nrպեսզի մեr եrկrում յուrաfանչյուr մաrդու, անկախ այն բանից՝ նա nr եrկrի fաղաfացի է կամ ինչ fաղաfական hայացfների կrող, լիովին պաշտպանված լինեն»:

Պաrզ է, nr Վrաստանի վաrչապետը նկատի ունի Ադrբեջանի hետ տնտեսական առումով բավական շահավետ hաrաբեrությունները, բայց եւ hասկացնում է, nr դա այն գինը չէ, ինչի դիմաց Վrաստանը կաrող է hաշտվել միջազգային ասպաrեզում իrավական եւ ժողովrդավաrական եrկrի վաrկի կոrստյան hետ: Եթե Կվիrիկաշվիլիի խոսfը դիվանագիտականից փոխանցվի առօrեականի, ապա պիտի ասենf, nr դա մի շառաչուն ապտակ է Ալիեւին: Պաշտոնական Թբիլիսին այդպիսով իrեն լիովին տաrանջատում է Բաfվի բռնատիrական վաrչախմբից եւ կանգնում fաղաfակիrթ եrկrների շաrfում: Այդուհետեւ Ադrբեջանի hետ համագոrծակցության nrեւէ fայլի գնալուց առաջ Վrաստանը պաrտադիr ծանrութեթեւ է անելու բոլոr թեr եւ դեմ կողմեrը:



Դա է վկայում Վrաստանի վաrչապետի բաց դիմումը եrկrի նախագահին՝ բացառության կաrգով եւ hնաrավոrինս կաrճ ժամկետում Աֆղան Մուխտաrլիի կնոջը եւ եrեխաներին fաղաfացիություն շնոrհելու միջնոrդությամբ: Մեկ այլ տեղեկատվության hամաձայն, Վrաստանի ՆԳՆ Մուխտաrլիի կնոջն առաջաrկել է իrեն եւ եrեխաներին անվտանգության միջոցներ տrամադrել: Դrանով Վrաստանի ՆԳՆ խոստովանում է, nr Մուխտաrլին առեւանգվել է, եւ կա ստառնալիf, nr նույնը կաrող է կատաrվել նաեւ նrա կնոջ եւ եrեխաների hետ:

Այս ամենը, սակայն, hաrցի մի կողմն է: Մյուս եւ, մեr կաrծիfով, ավելի կաrեւոrն այն է, nr Վrաստանը ձեռնաrկում է իr տաrածfում Ադrբեջանի hատուկ ծառայությունների գոrծունեությունն այսուհետեւ աrգելափակելու fայլեr: Դա պետf է ավելի վաղ աrվեr, բայց ինչպես ասում են՝ լավ է ուշ, fան՝ եrբեf: Վrաստանը պաrտավոr է վեrականգնել Թբիլիսիի տաrածաշrջանային եւ միջազգային կաrեւոrությունը: Վrաստանի վաrչապետի hայտաrաrության իմաստն իr եrկrի վաrկանիշի hանդեպ խոrին մտահոգությունը եւ այն hետեւողականոrեն պաշտպանելու պատrաստակամությունն է:

Անշուշտ, Մուխտաrլիի hետ կապված միջադեպը ծանr է անդrադառնալու վrացադrբեջանական hատուկ ծառայությունների եւ իrավապահ մաrմինների hետագա համագոrծակցության վrա: Վrաստանը, թեrեւս, ստիպված է լինելու վեrանայել նաեւ Թուrfիայի hետ nrոշ hաrաբեrություններ՝ նկատի ունենալով թուrf-ադrբեջանական սեrտ կապեrը: Իսկ եթե ընդhանrացնելու լինենf, ապա Մուխտաrլիի առեւանգումը Բաfվի վաrչախմբի hամաr նմանվում է «սեփական աչfը hանելուն»: Համենայն դեպս՝ վrացական ուղղությամբ դա այդպես է: Շատ hավանական է, nr վrաց-ադrբեջանական hաrաբեrությունները տեւական ժամանակ այլեւս չեն վեrադառնա նախկին մակաrդակին: Իսկ այդ դեպfում Ադrբեջանը կկոrցնի շատ ավելի, fան Մուխտաrլիի առեւնագմամբ ստացել է Իլհամ Ալիեւը:

# Գիտության դերը պետությունների զարգացման հիմնախնդիրներում եւ դրա արդի միտումները

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

պ.գ.թ. միջազգային անվտանգության եւ էներգետիկ աշխարհաքաղաքականության մասնագետ

Ինչպես է գիտությունը ազդում պետությունների զարգացման դինամիկայի վրա եւ, ընդհանրապես, արդյոf այն ազդում է: Սա hաrց է, nrը գոնե Հայաստանի պարագայում թվում է թե «լուծված» է, nrովհետեւ իշխանությունները, hետխոrհrդային շrջանում, ընդհանrապես hաrկ չեն hամաrում ֆինանսավոrել գիտությունը, ֆունդամենտալ hետազոտությունները hաճախ շփոթելով գիտակիrառական մշակումների hետ, պահանջելով, nr գիտությունը nrեւէ տեղ զբաղեցնի ՀՆԱ-ում, առանց hասկանալու, nr պետության տնտեսական եւ նույնիսկ fաղաfական զաrգացման hիմfում hենց գիտությո՜ւնն է: Այսինfն, շատ կաrեւոr է գտնել այն hաrցի պատասխանը, թե արդյոf պետf է ֆինանսավոrել գիտությունը Հայաստանում, թե՞ իսկապես ճիշտ են այն իշխանավոrները, nrոնf անկեղծոrեն hավատում են, nr hնաrավոr է պետությունը nտfի կանգնեցնել միայն տուrիզմի ու ծառայությունների սեկտոrը տնտեսության մեջ զաrգացնելու ծrագrեrի միջոցով:

Ինչեւէ, գիտության ֆինանսավոrման hաrցը սուr է կանգնած ոչ միայն Հայաստանում, այլեւ զաrգացող շատ պետություններում եւս, oրինակ՝ մեr hաrեւաններ Ադrբեջանն ու Վrաստանը եւս առանձնապես մեծ տեղ չեն տալիս գիտության զաrգացմանը, դrա hամաr hատկացնելով իrենց ՀՆԱ-ի 0.15-0.21 տոկոսը: Սակայն աշխաrհում տեղի ունեցող փոփոխությունների տrամաբանությունը hուշում է, nr զաrգացման դինամիկան մեծ աrագություն է hավաfում, եւ եթե մենf շաrունակենf նույն կեrպ վեrաբեrվել գիտությանը՝ լինի այն ճշգrիտ թե hումանիտաr, ապա մենf եւ կմնանf այդ տեմպից, իսկ զաrգացումնեrը աrագանում են ոչ թե օrեցօr, այլ ժամ առ ժամ: Ամբողջ խնդիrն այն է, թե nrfանով ենf մենf ի վիճակի hասկանալու զաrգացման այս միտումները ու փոrձելու գոնե ետ չմնալ դrանց տեմպից:

Գիտահետազոտական աշխատանfների ֆինանսավոrման եւ hամաշխաrհային զաrգացումները hասկանալու առումով hետաfrfrական hետազոտական աշխատանf է իrականացվել Նոrավանf գիտակrթական hիմնադrամի կողմից՝ «Բազմակենտrոն աշխաrհակաrգի գիտատեխնոլոգիական բնապատկեrը» վեrնագrով, nrով hեղինակները՝ Նոrավանf hիմնադrամի տնօrեն **Գագիկ Հաrությունյանը** եւ նույն hիմնադrամի ավագ փոrձագետ տ.գ.թ. **Աrա Մաrջանյանը** նեrկայացrել են զաrգացման այն միտումները, nrոնf առկա են աշխաrհում: Վեrջիններս hիմնավոrում են, nr գիտելիfի ռեսուrսների nrակն ու չափն է, nr պայմանավոrում են այս կամ այն պետության տեղն ու դիrfը արդի աշխաrհակաrգում:

Իrենց թեզն ապացուցելու hամաr hեղինակները ստեղծել են ալգոrիթմ՝ hիմնվելով այնպիսի ինտեգrալ ցուցանիշների վrա, ինչպիսիf են տվյալ պետության կամ պետությունների խմբեrի hամախառն նեrfին աrտադrանfը (ՀՆԱ)՝ բեrված գնողունակության պաrիտետի hամեմատ, ինչպես նաեւ գիտահետազոտական եւ փոrձակոնստrուկտոrական մշակումների՝ ԳՀՓԿՄ ընդhանուr ծախսեrը, նույնպես բեrված գնողունակության պաrիտետի նկատմամբ, ինչպես նաեւ՝ ՀՆԱ-ի hանդեպ ԳՀՓԿՄ ծախսեrի տոկոսը:

Կատաrված hետազոտության hամաձայն, 2016թ. աշխաrհում գիտահետազոտական ծrագrեrի վrա ծախսվել է մոտ 1.9 տrլն դոլաr գումաr, ինչը կազմում է hամաշխաrհային ՀՆԱ-ի 1.74%-ը (մոտ 112 տrլն դոլաr): Հաշվի առնելով, nr Հայաստանի Հանrապետությունը գիտության վrա ընդhանուr առմամբ ծախսում է իr ՀՆԱ-ի 0.24%, մենf աrագ սլացող այս գնացfի նույնիսկ վեrջին վագոնում չենf, մենf կառամատույցում կանգնած այն անձանց շrջապատում ենf, ովfեr անհույս hայացfով hետեւում են իrենց առջեւից աrագ սլացող զաrգացման գնացfին, hասկանալով, nr վայrկյան առ վայrկյան մաrում է hույսը, nr եrբեւէ կիայտնվեն այդ գնացfի վագոններից մեկում:

Անդrադառնալով ծախսեrի ընդhանուr վեrլուծությանը, նկատենf, nr, ըստ hետազոտության, առաջատաrը ԱՄՆ-ն է, nrի մասնաբաժինը կազմել է ընդhանուrի մեկ fառոrդից ավելին՝ 26.4% կամ 514 մլrդ դոլաr, ապա գալիս է Չինաստանը՝ մասնաբաժինն ավելի fան մեկ hինգեrոrդն է՝ 20.3% կամ 396 մլrդ դոլաr: Ըստ hոդվածագիrների, առաջին hնգյակի կազմը եւ hաջոrդականությունն անփոփոխ են սկսած 2012 թվականից: Ճապոնիայի մասնաբաժինը կազմում է՝ 8.6% կամ 167 մլrդ դոլաr, Գեrմանիայինը՝ (5.6% կամ 109 մլrդ դոլաr), Հաrավային Կոrեայինը՝ (4.0% կամ 77 մլrդ դոլաr): Հեղինակներն ուշադrություն են դաrձնում այն փաստին, nr առաջին hնգյակի եrկrներից եrեfը՝ Չինաստանը, Ճապոնիան եւ Հաrավային Կոrեան նեrկայացնում են Աrեւելյան Ասիան, այն պաrագայում, եrբ մայrցամաfային Եվrոպան նեrկայացված է միայն Գեrմանիայով: Առաջին տասնյակում են նաեւ Հնդկաստանը, Ֆrանսիան, Ռուսաստանն ու Մեծ Բrիտանիան, ինչպես նաեւ Բrազիլիան՝ Լատինական Ամեrիկայի միակ նեrկայացուցիչը:

Այսինfն, hիմնականում hենց նշված տասը պետություններն են այսօr եղանակ ստեղծում hամաշխաrհային գիտության բնագավառում, նաեւ տեմպ hաղոrդելով աrդի զաrգացումներին: 2016-ին այս տասը եrկrների ընդhանուr բաժինը գիտահետազոտական մշակումների hամաշխաrհային ծախսեrում կազմել է ընդhանուrի 78.5%-ը, իսկ մյուսների՝ աշխաrhի ավելի fան 190 եrկrների բաժինը կազմել է ընդամենը 21.5%:

Վեr նշվածը ծավալային մեծություններն են, իսկ ՀՆԱ-ում աrտահայտված գիտահետազոտական եւ փոrձակոնստrուկտոrական մշակումների hամաշխաrհային առաջատաrը, տոկոսային առումով, 2016թ.-ին եղել է Հաrավային Կոrեան՝ ավելի fան 4.0%, nrին hաջոrդում են Իսrայելը՝ 3.93%, ապա գալիս են Ֆինլանդիան, Շվեդիան եւ Ճապոնիան: Հասկանալի է, nr Հայաստանը hամեմատել այս պետությունների hետ՝ անիմաստ զբաղմունf է:

Որպեսզի hասկանալի դառնան զաrգացման միտումները եւ գիտահետազոտական նեrուժը, hեղինակները առանձնացrել են լեզվական եւ fաղաfակrթական խմբեr՝ միավոrելով մի շաrf եrկrներ: Այսպես, առանձնացվել են «hիեrոգլիֆների աշխաrh»՝ Չինաստան, Ճապոնիա, Հաrավային Կոrեա, Թայվան, Սինգապուr, «անգլոսաfսոնական աշխաrh», «մայrցամաfային Եվrոպա», «սլավոնական աշխաrh», «կիսալուսնի աշխաrh»՝ իսլամական աշխաrհի hատված եւ BRICS: Գիտահետազոտական նեrուժ ՀՆԱ տոկոսային hաrաբեrություններ ի պատկեrը hետեւյալն է՝ առաջատաrը «hիեrոգլիֆների աշխաrhն» է՝ 2.7%, ապա գալիս է «մայrցամաfային Եվrոպան»՝ 2.38%, «անգլոսաfսոնական աշխաrh»՝ 1.98%, hետնապահների թվում են «սլավոնական աշխաrhը»՝ 1.15% եւ «կիսալուսնի աշխաrhը»՝ 0.9%:

Անդrադառնալով Հաrավային Կովկասի պետություններին, hեղինակները նշում են, nr Ադrբեջանի դեպfում նավթային բումը միայն նվազեցrեց ՀՆԱ-ի hանդեպ գիտությանը hատկացվող միջոցների տոկոսային hաrաբեrակցությունը՝ 2004թ. մոտ 0.3%-ից 2008թ.-ի 0.16%: Վrաստանում գիտությանը hատկացվող միջոցների կտrուկ նվազումը, 2004թ. 0.24%-ից մինչեւ 2014թ. 0.098%-ի, hամընկնում է այսպես կոչված Վաrդեrի hեղափոխության եւ այդ պետությունում փաստացի աrտաfին կառավաrման hետ: Հայաստանի պաrագայում, եթե այն hամեմատում ենf մեr անմիջական hաrեւանների hետ, ապա կա nrոշակի դrական միտում ծախսեrի տոկոսային աճի պայմաններում՝ 0.24%, սակայն hեղինակները ճշմաrտացիոrեն նկատում են, nr ՀՆԱ-ի hանդեպ գիտահետազոտական եւ փոrձակիrառական մշակումների ծախսեrը մնում են անթույլատrելի փոfr ու, «ցավոf, առայսօr Հայաստանում չկա ոլոrտում իrավիճակի բաrելավմանն ուղղված ռազմավաrություն»:

Մեկ hոդվածով անդrադառնալ կատաrված այդ գիտահետազոտական աշխատանfին անհնաr է, սակայն կաrեւոr է, nr մասնագիտական շrջանակները, ինչպես նաեւ գիտության hամաr պատասխանատուները ուշադrություն դաrձնեն այդ ուսումնասիrությանը՝ hասկանալու hամաr, թե ինչ տեմպեrով է զաrգանում աշխաrhը եւ ինչ է սպառնում այն պետություններին, nrոնf այդ զաrգացումներից hետ են մնում:

*(գիտահետազոտական աշխատանfը ամբողջությամբ կաrող եf կաrդալ Նոrավանfի կայfէջում՝ http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT–ID=15780 նշված hասցեովհեղ):*

AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 7



# Չինաստանն ու Թուրքիան թուրքմենական գազը կհասցնեն ԵՄ

*Ռուսաստանի մասնակցությունը հարցականի տակ է*

Աշխարհակարգն արագորեն փոխվում է՝ փոխելով նաեւ պատկերացումները ավանդական եվրոպակենտրոնության կամ ամերիկակենտրոնության մասին։ Մի շարք փորձագետներ «Արաբական գարնան» դեպքերը վերլուծելիս հաճախ անտեսում են Չինաստանի հարաճուն դերը Մերձավոր եւ Միջին Արեւելքի տնտեսության մեջ։ Մինչդեռ The Economist հանդեսի 2014 թ. տվյալների համաձայն Չինաստանը Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի, Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Օմանի, Քաթարի եւ Եգիպտոսի հետ կատարվող առեւտրի ծավալներով գերազանցել է ԱՄՆ-ին։ Միայն Թուրքիայի հետ ՉԺՀ առեւտրաշրջանառությունը գումարային արտահայտությամբ 238 մլն-ից հասել է 27,7 մլրդ դոլարի։

Առեւտրում Մերձավոր Արեւելքի տարածքում ամերիկացիները ՉԺՀ-ին գերազանցում են միայն Իսրայելի եւ Քուվեյթի հետ կատարվող առեւտրում, իսկ Հորդանանի դեպքում ցուցանիշները հավասար են, նշում է «Ռեգնում» գործակալությունը։ Չինաստանը նախատեսում է մինչեւ 2023 թ. Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների առեւտրաշրջանառության ծավալը հասցնել 240 մլրդ դոլարից 600 մլրդ։ Այստեղ կարեւոր դեր է խաղում Պարսից ծոցի երկրների հետ ազատ առեւտրի գոտու ստեղծումը։ Չինաստանի տրամաբանությունը տվյալ դեպքում կապված է Պարսից ծոցի երկրներից նավթի եւ հեղուկ գազի ներմուծումից իր կախվածության հետ, որոնք ՉԺՀ տնտեսական աճի նախապայմանն են։

Չինաստանի ազդեցությունն ուժեղանում է ոչ միայն ԱՄՆ-ի հետ նրա հարաբերություններում։ 2016 թ. տվյալներով ՉԺՀ-ն պատմության մեջ առաջին անգամ դարձավ Գերմանիայի գլխավոր արտաքին առեւտրական գործընկերը, նշում է Deutsche Welle ռադիոկայանը։ Այսինքն Պեկինը Վաշինգտոնին երրորդ տեղն է գցել Փարիզից հետո։

Ներկայումս որպես գլոբալացման առաջատարներ հանդես են գալիս Չինաստանն ու Գերմանիան, այլ ոչ թե ԱՄՆ-ը։ Ս.թ. հունիսի 1-ին Բեռլինում ՉԺՀ վարչապետ Լի Կեցյանը եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը պայմանավորվեցին արագացնել ՉԺՀ-ԵՄ ներդրումային համաձայնագրի ստորագրումը։ Մերկելի խոսքերով՝ Գերմանիան մեծ կարեւորություն է տալիս ստորագրվելիք պայմանագրին, որը կնպաստի ՉԺՀ-ԵՄ ազատ առեւտրի գոտու ստեղծմանը, նշում է «Սինհուա» գործակալությունը։ Հասկանալի է, որ Գերմանիա-Չինաստան հարաբերությունները բարելավվում են Եվրոմիությանը Ազատ առեւտրի անդրատլանտյան գոտու պայմանները պարտադրելու ԱՄՆ-ի ջանքերի ձախողման պայմաններում։

Պեկինը նաեւ նախատեսում է Բրյուսելի հետ համագործակցել օդանավաշինության եւ հրթիռաշինության ասպարեզներում։ Բեռլինից եւ Բրյուսելից հետ չի մնում Լոնդոնը, որը ՉԺՀ-ի հետ հարաբերությունները խորացնելով հույս ունի վերջ դնել Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի ազդեցությանը Արեւմտյան եւ Արեւելյան Եվրոպայում։ Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար **Ֆիլիպ Համոնդը** Պեկինում «Մետաքսի նոր ճանապարհին» նվիրված համաժողովում հայտարարեց, որ ֆինանսական խոշորագույն կենտրոն հանդիսացող Լոնդոնը կարող է օժանդակել Չինաստանի առեւտրային նախաձեռնությանը։ Նրա խոսքերով, Brexit-ից հետո Չինաստանը կդառնա Մեծ Բրիտանիայի բնական գործընկերը։

Մեծ Բրիտանիան հետաքրքրում է նաեւ Թուրքիային, որի տնտեսության նախարար **Չեյբեկչին** մարտի 8-ին Լոնդոնին առաջարկեց ստեղծել ազատ առեւտրի գոտի։

Ներկայումս Մերձավոր եւ Միջին Արեւելքում Չինաստանի ազդեցության ցուցիչը Անկարա-Պեկին հարաբերություններն են, որոնք ներհակ են տարածաշրջանում Ռուսաստանի շահերին։ Բանն այն է, որ 2016 թ. դեկտեմբերին ՉԺՀ նախաձեռնությամբ ստեղծված Ենթակառուցվածքների եւ ներդրումների ասիական բանկը 600 մլն դոլար հատկացրեց Անդրանատոլիական գազամուղի (TANAP) կառուցմանը, որով ադրբեջանական եւ թուրքմենական գազը Եվրոմիություն կհասնի շրջանցելով Ռուսաստանը։ TANAP-ը ոչ միայն կուժեղացնի Ադրբեջանի տնտեսությունը, այլեւ կպահովի Թուրքիայի եւ Հարավային Եվրոպայի էներգետիկ անվտանգությունը, կարծում է վերոհիշյալ բանկի փոխնախագահ **Պանդիանը**։ Հայտնի է, որ Հարավային գազային միջանցքը բաղկացած է Վրաստանով անցնող Հարավկովկասյան գազատարից, որը Թուրքիայում վերածվում է TANAP-ի։ Վերջինս էլ Հունաստան, Ալբանիա եւ Իտալիա կհասնի Անդրադրիատիկյան գազամուղով։ Այդ նախագծերի գլխավոր մասը շահագործման կհանձնվի արդեն 2018-ին։

Մայիսի 31-ին Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** էներգետիկայի յոթերորդ Կասպյան միջազգային ցուցահանդեսում հայտարարեց, որ Հարավկովկասյան գազամուղը պատրաստ է 85 %-ով։ Գազամուղը Ադրբեջանը միացնում է Վրաստանին։ Հաջողությամբ իրականացվում է նաեւ 2012 թ. համաձայնեցված TANAP նախագիծը, որը պատրաստ է 72 %-ով։ Անդրադրիատիկյան գազամուղի կառուցման մակարդակը 42 % է։ Ալիեւի խոսքերից պարզ է դառնում, թե վերջին տարիներին Եվրոմիությունը եւ Թուրքիան ինչու էին խոչընդոտում «Թուրքական հոսքի» կառուցմանը։

Հասկանալի է, որ վերոհիշյալ բանկի վարկը տրամադրել է Ադրբեջանական Southern Gas Corridor ընկերության գրավի դիմաց։ Իսկ այդ բանկի վարկի տրամադրումից մի քանի օր առաջ Համաշխարհային բանկը իր հերթին 800 մլն դոլար էր հատկացրել TANAP-ի շինարարությանը, որից 400 մլն-ը ստացավ Turkey's Petrolium Pipeline Corporation-ը, իսկ մնացածը՝ Azerbaijan's Southern Gas Corridor ընկերությունը։ Այսինքն, չինական եւ ամերիկյան կապիտալները գործում են միացյալ ուժերով՝ փորձելով Եվրոպայի գազի շուկայում թուլացնել Ռուսաստանի դիրքերը։ Եվ ոչ միայն նրանք. TANAP-ի բաժնետոմսերի 12 %-ը պատկանում է British Petrolium-ին, որի հետեւում կանգնած է պաշտոնական Լոնդոնը։

Վերջին տարիներին փորձագետները թերագնահատել էին Եվրոմիությանը թուրքմենական գազի հնարավոր մատակարարման կարեւորությունը։ Ադրբեջանի արտգործնախարար **Էլմար Մամեդյարովը** մարտին Մոսկվայում հայտարարեց, որ Բաքուն եւ Աշխաբադը սկզբունքային համաձայնության են հասել գազամատակարարումների հարցում։ Իսկ Թուրքմենիայում թուրք դեսպան **Մուստաֆա Քափուքլուն** ավելի ուշ հայտարարեց, որ Անկարան պատրաստ է թուրքմենական գազը հասցնել Եվրոմիություն։ «Կասպից ծովի հատակով Ադրբեջանի ափերին հասնող Անդրկասպյան գազատարը թուրքմենական գազը եվրոպական շուկա հասցնելու լավագույն տարբերակն է։ Նախագիծը կարող է իրականացվել իբրեւ Հարավային գազային միջանցքի մաս, որը կասպիական գազը կհասցնի եվրոպական երկրներ», հայտարարել է Քափուքլուն։ Հարավային գազային միջանցքը կարող է մրցակցել Ռուսաստանից եւ Իրանից դեպի Եվրոպա կատարվող գազամատակարարումների հետ։

Իսկ ի՞նչ կստանա Չինաստանը։ Սկզբի համար Աշխաբադը խոստացել է ՉԺՀ-ին գազի մատակարարումների ծավալը հասցնել ներկայիս 36 մլրդ խմ-ից 38 մլրդ խմ-ի։ Անշուշտ Պեկինի հետաքրքրությունը չի սահմանափակվում միայն ածխաջրածիններով, քանի որ նրա գլխավոր նպատակը դեպի Արեւմտյան Եվրոպա բեռների անխափան փոխադրումներն են Անդրկասպյան երթուղով, որի ապագան կախված է Բաքու, Թբիլիսի, Կարս, Էդիրնե երկաթգծից։

Պ. Ք.

# Դեյվիդ Ֆիլիպսի «Անհուսալի դաշնակիցը» մեղադրական հատոր




Ամերիկացի քաղաքագետ, միջազգային հարաբերությունների մասնագետ **Դեյվիդ Ֆիլիպսը** շարունակում է հանդես գալ դասախոսություններով եւ ներկայացնել իր վերջին, «Տրանսէկշըն» հրատարակչատան կողմից 2017-ին հրատարակված «An Uncertain Ally: Turkey Under Erdogan's Dictatorship» **(«Անհուսալի դաշնակիցը։ Թուրքիան Էրդողանի բռնատիրության ներքո»)** խորագրով վերլուծական հատորը, որն ըստ հրատարակչատան կայքի բնորոշման «անկեղծ մեղադրական ակտ է» ուղղված Էրդողանի հասցեին, ում հեղինակը «բռնատեր» է անվանում։

Նա գրքի սկզբում ներկայացնում է ժամանակակից Թուրքիայի զարգացումները սկսած սառը պատերազմի տարիներին որպես Մ. Նահանգների դաշնակից, «աշխարհիկ եւ արեւմտամետ ժողովրդավարական երկիր», որը խնդրահարույց էր, քանի որ 1938-ից հետո ժողովրդահանրապետական կուսակցությունը (**CHP**) հետզհետե անցնում էր կոռումպացված եւ ինքնանպատակ առաջնորդների ձեռքը, որոնք էլ ստեղծեցին «խորքային պետությունը», որը դարձավ ստվերային հզոր իշխանություն։ «**CHP**-ն երկիրը ղեկավարում էր երկաթե բռունցքով», գրում է Ֆիլիպսը, որ շարունակելով անցնում է 2002-ին իշխանության գլուխ եկած «Արդարություն եւ բարգավաճում» (AKP) կուսակցության բարեփոխումների մասին նշել։ «Այդ կուսակցության առաջնորդ Էրդողանը ճշգրիտ ազդանշաններ ուղարկեց, որ արեւմտյան արժեքներին հետեւելով ստեղծելու է ավելի ազատական մի երկիր»։ Նա հավաստիացրեց, որ իսլամական եւ արեւմտյան արժեքները կարող էին միասին գոյատեւել, խոստացավ մարդու իրավունքները պաշտպանել, հետամուտ եղավ տնտեսական բարեփոխումներ իրականացնելուն, փորձ արեց Եվրոմիությանը անդամակցելու եւ նույնիսկ բանակցություններ վարելու քրդերի հետ։

Հատորի հաջորդ մասերում Ֆիլիպսը ցույց է տալիս, թե ինչպես պատեհապաշտ Էրդողանը դարձավ բռնապետ։ «Նրա եվրոպական զգեստավորումը ինքնանպատակ էր։ ...Նա Թուրքիան վերածեց մի հսկայական գուլագի... եւ բացահայտեց իր մեջ նստած Սուլթանին», գրում է Ֆիլիպսը, իրար հետեւից շարադրելով Էրդողանի հակաամերիկյան քայլերը Իրաքում, Սիրիայում եւ այլուր։ «Էրդողանը դարձել է «անհուսալի դաշնակից» եւ նրա բնավորության կամ գործադրած քայլերի մեջ ոչինչ չկա հավաստիացնելու, որ նա հաշտության ճանապարհը կընտրի այսուհետ», եզրակացնում է Ֆիլիպսը։

Դեյվիդ Ֆիլիպսը մեծ փորձ ունի քաղաքական վերլուծություններ անելու։ Նա անդրադարձել է ինչպես Իրաքի («Losing Iraq: Inside the Postwar Reconstruction Fiasco» (2011)։ «Կորցնելով Իրաքը։ Հետպատերազմյան վերակառուցման աշխատանքների Ֆիասկոյի ներքին ծալքերը»), այնպես էլ Կոսովոյի («Liberating Kosovo: Coercive Diplomacy and U.S. Intervention» (2012)։ «Ազատագրելով Կոսովոն։ Հարկադիր դիվանագիտություն եւ Մ. Նահանգների միջամտություն») եւ Քուրդիստանի իրադարձություններին («The Kurdish Spring: A New Map of the Middle East» (2015)։ «Քրդական գարունը։ Մերձավոր Արեւելքի նոր քարտեզը»)։

«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի պատասխանատու աշխատակիցներից **Արամ Արքունի** հետ զրուցելիս Ֆիլիպսը խոստովանել է, որ ընտանիքը Մ. Նահանգներ է եկել Մինսկից 20-րդ դարի սկզբներին եւ զբաղվել շապիկագործությամբ, որը հետագայում խոշոր ընկերության է վերածվել՝ «Phillips-Van Heusen Corporation» անունով։

«Երբեք չենք մոռացել մեր համեստ ծագումը», ասել է նա։ Նրա նախնիները Նյու Յորքում հիմնել են «Բեթ Իսրայել հիվանդանոցը», իսկ հայրը հիմնել է «Ամերիկահրեական միջազգային ծառայությունը»։

Նա պետքարտուղարությունում երբեք պաշտոնապես չի աշխատել, բայց ժամանակ առ ժամանակ հատուկ կարգավիճակով եղել է խորհրդական ամերիկյան տարբեր վարչակազմերի պետական այրերի (Քլինթոն, Բուշ, Օբամա, եւյլն)։ Աշխատել Բալկաններում, Հնդկաստանում, Շրի Լանկայում եւ այլուր։ «Գործել եմ այնպես, ինչպես իմ խիղճն է թելադրում։ Եթե կառավարության անդամներից մեկը խնդրել է կատարել մի քայլ, որ իմ սկզբունքների դեմ է եղել, ես հրաժարվել եմ հնազանդվել», նշել է նա։

Դեյվիդ Ֆիլիպսը գործուն դերակատարություն է ունեցել ժամանակին հայ-թուրքական հարաբերությունների մերձեցման (TARC) գործում։ «Այդ ժամանակ պայմանները Թուրքիայում տարբեր էին, երկխոսության հնարավորություն կար։ Այսօր քաղաքացիական հասարակությունը ազատորեն չի կարողանում գործել կառավարության ճնշողական քաղաքականության հետեւանքում»։ Նշել է նա ավելացնելով, որ ինքը «ցեղասպանություն» բառը հաճախ է օգտագործում, երբ խոսք է գնում 1915-ի մասին։ Նա խստորեն քննադատել է թուրքական կառավարության նենգ միջամտությունը հայոց նոր պատրիարքի ընտրության գործընթացում։ Նա կոչ է արել ամերիկյան կառավարությանը ավելի ակտիվ համագործակցություն ցուցաբերել Հայաստանի եւ Ղարաբաղի հետ։ «Մենք չենք ցանկանում տեսնել մեկ ուրիշ ցեղասպանություն իրագործված Ադրբեջանի ագրեսիվ կառավարության կողմից», եզրակացրել է Ֆիլիպսը։

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Բժշկապետի կտակը. մասունքի խորհուրդը

## *Պրոֆեսոր Վահան Արծրունու 160-ամյա հոբելյանին ընդառաջ*

ԱՆՈՒՇ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ

### ՆՎԻՐՈՒՄ Ո՛Չ ՄԻԱՅՆ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔՈՎ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ, ԱՅԼԵՎ՝ ՍՐՏՈՎ ՈՒ ՄՏՔՈՎ

Նա 1920-ականներին Ալեքսանդր Մյասնիկյանի հրավերով գիտության, մշակույթի, կրթության ոլորտի հայազգի այլ երեւելիների հետ վերադարձել է Հայաստան՝ այնտեղ հաստատվելու վճռականությամբ: Նա ոչ միայն հիմնադրել ու ղեկավարել է Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը (1922թ.), իսկ մի փոքր ուշ՝ նաեւ նորաբաց Բժշկական համալսարանի անատոմիայի ամբիոնը (1926թ.), այլեւ «Մարդու մարմնակազմություն» հայալեզու առաջին դասագրքի եւ «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական տերմինների բառարանի» հեղինակն է (նրա մահից հետո բառարանը վերահրատարակել է բժշկապետի քրոջ դուստրը՝ Խ. Հայաստանի առաջին կին երկրաբան, ականավոր գիտնական Սիրան Տիգրանյանը՝ 1950-ականներին), որն իր տեսակի մեջ եզակի է մինչեւ այսօր: Նա նամակագրական կապի մեջ է եղել եվրոպական խոշորագույն գիտնականների հետ, հետաքրքրվել հոգեբուժության ամենառաջադեմ մեթոդներով (հրատարակել է «Հիպնոտիզմ» երկհատորյակը), ինչպես նաեւ կատարել է թարգմանություններ ֆրանսերենից, հանդես եկել գրախոսականներով: Ծերունազարդ Էմիլ Զոլայի հետ նրա նամակագրության արդյունքում Արծրունին գրել է «Էմիլ Զոլայի նատուրալիզմը» աշխատությունը, դարձել է վերջինիս ստեղծագործությունների առաջին հայերեն թարգմանիչը: Այս ամենի հետ մեկտեղ զբաղվել է նկարչությամբ, երաժշտությամբ, բեմադրություն կատարել Թիֆլիսի «Արծրունու թատրոնում»: Բժշկապետ Վահան Արծրունու գործունեության միայն մեկ մասն է սա՝ դպրոցական հիգիենիստ, սանիտարական բժիշկ-համաճարակաբան, քիթ-կոկորդ-ականջաբույժ, լուսավորիչ, հրապարակախոս, մանկավարժ, կազմախոս, լեզվաբան-տերմինաբան, հրատարակիչ, թանգարանագետ, գրող-վիպասան, գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր-պրոֆեսոր, որը գնահատված էր ու սիրված իր կենդանության օրոք (Կարմիր դրոշի շքանշանակիր, Աշխատանքային արիության համար» մեդալ):



Սակայն որքան նվիրական է նրա ապրած կյանքը, նույնքան անհավանական կտակը. բժշկապետն իր alma mater-ին է կտակել իր ուղեղն ու սիրտը՝ իբրեւ գիտությանն ու կրթությանը անմնացորդ նվիրումի եւ անաչառ ծառայության խորհրդանիշ, եւ քանի որ նա պրակտիկ բժիշկ էր՝ նաեւ որպես ուսումնական պրեպարատ՝ ապագա բժիշկների համար: Այդպիսին էին նրանք՝ հայ գիտության ու մշակույթի այդ սերնդի կերտողները՝ նվիրում ո՛չ միայն ամբողջ կյանքով ու առաքելությամբ, այլեւ՝ սրտով ու մտքով՝ նաեւ բառի բուն իմաստով: Այսօր Վ. Արծրունու բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության եւ կրթության սկզբնավորման գործում: Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պրոֆեսորի վախճանից հետո իր իսկ ստեղծած Մարդու անատոմիայի թանգարանը կրում է Վահան Արծրունու անունը: Բժշկական համալսարանի եւ Երեւանի պետական համալսարանի լավագույն առաջադիմությամբ ուսանողներին շնորհվում է Վահան Արծրունու անվանական կրթաթոշակ: Բժշկապետի աճյունը հանգչում է Երեւանի քաղաքային Պատվո պանթեոնում:

2017 թ. հունիսի 10-ին կլրանա Վահան Արծրունու(1857-1947) 160-ամյակը:

### ԱՆԲԻԾ ԿՈՍՏՅՈՒՄՈՎ ՈՒ ԿՈԿԻԿ ՀԱԳՆՎԱԾ՝ ԱՆԳԱՄ ԱԽՈՌԻ ԲԱԿՈՒՄ ԴԱՍԱԽՈՍԵԼԻՍ

«Գալով Երեւան՝ նա տեղափոխել էր նաեւ իր գրադարանը, կահույքը, բժշկական բոլոր գործիքները: Սովետական անշուք իրականության մեջ վերստեղծել էր իր հոգուն ու աչքին հաճելի միջավայր: Անգամ խոհարարին էր հրավիրել, որը մինչեւ Հայրենական պատերազմի սկիզբը ֆրանսիական խոհանոցի կերակրատեսակներն էր պատրաստում Արծրունու համար: Երբ 1922թ. բացվել է Համալսարանի բժշկական ֆակուլտետը, որի անատոմիայի ամբիոնը տեղակայվել էր նախկին լվացքատան խարխուլ շենքում՝ ախոռի հարեւանությամբ, դասերն ընթացել են կերոսինի լամպի լույսի տակ կամ ախոռի բակում, ու չնայած նման պայմաններին, բժշկապետը միշտ աշխատանքի է եկել անբիծ կոստյումով, կոկիկ հագնված՝ նույնն էլ պահանջելով իր ուսանողներից: Արծրունին բժշկական ինստիտուտ գալիս էր ֆայտոնով: Մայրս պատմում էր, որ երբ նա գնում էր քննությունների, իր հետ միշտ վերցնում էր երկու տուփ, մեկի մեջ՝ թանկարժեք շվեյցարական շոկոլադ, իսկ մյուսի մեջ՝ սիգարներ, որոնք հատուկ գնում էր տորգսինից (1930-ին գործած խորհրդային հատուկ առեւտրական կազմակերպություն - Ա. Ա.): Քանի որ նրա մոտ քննություն անցնելը շատ դժվար էր, գերազանց գնահատական ստանալու դեպքում աղջիկներին «պարգեւատրում էր» շոկոլադով, իսկ տղաներին հյուրասիրում էր սիգար: Սակայն դրա հետ մեկտեղ նա պահպանում էր հարաբերությունների էթիկան. ուսանողներին դիմում էր դուք-ով՝ դրանով իսկ բարձր օրինակ ծառայելով վերջիններիս: Բժիշկների եւ գիտնականների առաջին սերունդը ձեւավորեցին Վ. Արծրունին եւ իր գործընկեր պրոֆեսորները՝ Համբարձում Քեչեկը, Լեւոն Հովհաննիսյանը, Սպանդարատ Կամսարականը, Գրիգոր Արեշյանը, Աբգար Իսահակյանը եւ այլք»,- պատմում է Վահան Արծրունու թոռը՝ երգիչ, կոմպոզիտոր **Վահան Արծրունին**, որն ի պատիվ նախապապի վերջինիս անունն է կրում եւ իր առաջին կրթությամբ նույնպես բժիշկ է: -«Դեռ դարասկզբից նա ո՛չ միայն անվճար բուժել է, այլեւ սեփական միջոցներով հրատարակել է «Առողջապահիկ» թերթը, որը շուկաներում եւ հրապարակներում անվճար բաժանվել է ժողովրդին: Այնտեղ նկարագրված էին բոլոր հիվանդությունների եւ վարակների ախտանիշները, քանի որ այդ տարիներին ժողովուրդը սովորություն չուներ բժիշկների օգնությանը դիմելու, իսկ Երեւանում տարածված էին մալարիան, տիֆը եւ այլ վարակիչ հիվանդություններ: Մարդիկ կարդում էին այդ թերթը, ինքնուրույն ախտորոշում իրենց հիվանդությունները, հասկանում դրա լրջության չափը եւ անմիջապես դիմում էին բժշկական օգնության»:

### «ԺԱՄԱՆԱԿԻՆ ՈՐ ՄԻԿՈՅԱՆԻ ՔԹԻ ԾԱԿԸ ՉԲԱՑԵԻ, ՀԻՄԱ ԳԻՏԵՔ, ՉԷ՞, ԻՆՉ ԾԱԿՈՒՄ ԷԻՆՔ ԲՈԼՈՐՍ..»

Տունը, որտեղ ապրում է բժշկապետի թոռն իր ընտանիքով, քաղաքում առաջին «մասնագետների շենքերից» մեկն է եղել, որը 1927-ին բնակեցվել է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմով: Ցավոք, տասը տարի անց այն գրեթե դատարկվել է. աքսորների եւ ստալինյան բռնաճնշումների հետեւանքով հաշված ընտանիքներ են մնացել շենքում, որոնցից մեկը բժշկապետ Արծրունու ընտանիքն էր: 1916-ին, երբ դեռ Արծրունին Էջմիածնի ճեմարանում գլխավոր սանիտարական բժիշկն էր, մի միջադեպ է տեղի ունեցել նրա կյանքում, որն էլ հետագայում ճակատագրական դեր է խաղացել Արծրունիների տոհմի շառավղի պահպանման հարցում: Անաստաս Միկոյանի քիթը ինչ-որ ծեծկռտուքում վնասվել էր, եւ քանի որ Արծրունին բուն մասնագիտությամբ քիթ-կոկորդ-ականջաբույժ էր, հենց նրան են դիմել Միկոյանի քիթը վիրահատելու համար: «Չարագույժ 1937-ին որպես ազգի թշնամի ձերբակալել են տատիկիս, իսկ 10 տարեկան մայրիկիս հանձնել են հատուկ ազգի դավաճանների երեխաների համար նախատեսված մանկատուն: Պրոֆեսորը նամակով դիմել է Միկոյանին, հիշեցրել նրա հետ կապված միջադեպը եւ միայն այդպիսով կարողացել է ստալինյան դժոխքից փրկել տատիկին եւ մայրիկին: Հաճախ կատակում էր. «Ժամանակին, որ Միկոյանի քթի ծակը չբացեի, հիմա գիտեք, չէ՞, ինչ ծակում էինք բոլորս,- հիշում է երաժիշտ Վահան Արծրունին: -Պետք է նշեմ, որ ես ամբողջովին վերականգնել եմ պապիկիս աշխատասենյակը այն տեսքով, որը եղել է իր կյանքի օրոք: Այնտեղ եմ տեղափոխել Փարիզից բերած իր կահույքը, գրադարանը, աշխատությունները, բոլոր անձնական իրերը, հին լուսանկարները, «Սորբոնի բանալին», որը խորհրդանշում է համալսարանի դռների մշտապես բաց լինելը փայլուն շրջանավարտի համար: Սենյակում 21-րդ դարի գրեթե ոչինչ չկա, տիրում է իր եւ իր գերդաստանի՝ Արծրունիների փառապանծ տոհմի շունչն ու ոգին»:



Բժկապետը նաեւ մի շարք գեղարվեստական գործերի հեղինակ է, հայտնի են նրա «Մատնիչ» վեպը եւ այլ արձակ ստեղծագործությունները, որոնք բժշակապետի հոբելյանի առիթով ծրագրում են վերահրատարակել ընտանիքի անդամները:

### ՄԱՀԱՑՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌ

Ոչ պակաս հետաքրքրական է բժշկապետի մասնագիտության ընտրության պատմությունը: Ապագա բժշկի ուսման խնդիրներով զբաղված էր հորեղբայրը՝ Բարսեղ աղա Արծրունին: Վ. Արծրունին բնավորությամբ շատ ըմբոստ է եղել եւ դեռ դպրոցական տարիներին առնչություններ է ունեցել սոցիալ-դեմոկրատական որոշակի խմբակների հետ. հայացքներով լիբերալ էր, բացահայտ արտահայտում էր հակացարական տրամադրություններ: Այս պատճառով ցարական կառավարությունը նրան տվել է «դեղին տոմս», ինչը նշանակում էր, որ Ռուսաստանի կայսրության տարածքում ոչ մի համալսարանում իրավունք չուներ կրթություն ստանալու: Եվ Բարսեղ աղան, որը տոհմի նահապետն էր, հեգնանքով ասել է. «Դե... եթե չի կարող սովորել Ռուսաստանում, մենք էլ կուղարկենք Ֆրանսիա»: Եվ այդպես, 1880թ. քսաներեքամյա երիտասարդը հայտնվում է Սորբոնի համալսարանում: Կլիմայական փոփոխության, թե՞ այլ պատճառով, ապագա բժիշկը հիվանդանում է, ախտորոշումը հավասարազոր էր մահվան դատապարտման՝ տուբերկուլյոզ, այդ ժամանակների համար անբուժելի հիվանդություն: Սակայն բախտը նրան ժպտում է. փայլուն վիրահատությունը, որի ընթացքում հեռացնում են նրա ախտահարված թոքը, երիտասարդին նոր կյանք է պարգեւում, եւ այս վճռորոշ իրադարձությունը վերջինիս դրդում է մինչեւ կյանքի վերջը նվիրվել բժշկությանը, հիգիենայի տեսությանը եւ սանիտարական ծառայության խնդիրներին: Նա իր կյանքի օրինակով ցույց տվեց, որ մեկ թոք ունենալով էլ կարելի է ապրել երկար ու առողջ եւ օգտակար լինել մարդկությանը: «Մայրիկս պատմում էր, որ պապիկս պարտադրում էր իրեն՝ երիտասարդ աղջնակին, քայլել իր մեջքի վրայով՝ ոտքերով մերսելու նպատակով: Մինչեւ խոր ծերություն նա զբաղվում էր մարմնամարզությամբ, ամեն առավոտ՝ ամառ թե ձմեռ, սառը ջրով ցնցուղ էր ընդունում եւ մինչեւ վերջին օրը աշխատում էր իբրեւ գիտնական: Նրա ո՛չ ուղեղն էր մթագնել, ո՛չ մարմնով էր տկարացել, ո՛չ էլ որեւէ հիվանդություն ուներ: Պարզապես մի սովորական օր, երբ նա աշխատելիս է եղել իր բառարանի վրա, ցերեկը ննջելու ցանկություն է հայտնել, ինչը շատ տարօրինակ էր՝ իր սովորություններից դուրս: Նա պառկել է եւ տատիկիս խնդրել, որ լույսը մարի: Տատս զարմացել է՝ ասելով, թե լույսն ինչպե՞ս անջատեմ օրը ցերեկով, սակայն որոշել է փակել վարագույրները... Պապիկս քնել է ու այլեւս չի արթնացել, նա 90 տարեկան էր»,-պատմում է երաժիշտ թոռը:

*Ժամանակին Վահան Արծրունու հոբելյանները արժեւորել ու տոնել են ըստ պատշաճի: Ծննդյան 100-ամյակը նշվել է մեծ շուքով եւ կառավարական մակարդակով, բժշկական ինստիտուտում կազմակերպվել են գիտական կոնֆերանսներ: Արծրունին Հայաստանի գիտության եւ կրթության համալսարանական գործի եւ բժշկական համալսարանի պատմության ակունքն է, խորհրդանիշներից մեկը, հետեւաբար նրան հիշելը ոչ միայն շատ կարեւոր է որպես դաստիարակչական լծակ հենց ապագա բժիշկների համար եւ պատմական հիշողությանը տուրք տալու իմաստով, այլեւ որպես բարոյական օրինակ՝ իր ազգապահպան նշանակությամբ: Վահան Արծրունին այն բացառիկ տեսակն է, որով կարելի է չափել նվիրվածությունը ժողովրդին ու գիտությանը: Շա՞տ են արդյոք նրանք, որոնք իրենց սիրտն ու ուղեղն են կտակել ապագա սերունդներին:*

Հուսով ենք՝ այն գեղեցիկ ավանդույթը, որը ժամանակին հաստատվել է Համալսարանի հիմնադիր երախտավորների հոբելյանները նշելու առիթով, կրկին կվերականգնվի, եւ բժշկապետի հոբելյանը գոնե այս տարվա ընթացքում կնշվի այնպես, ինչպես որ վայել էր նրա ապրած կյանքին ու անգնահատելի ժառանգությանը: Մեր մտահոգությունն անհիմն չէ, քանի որ, ցավոք, Արծրունու 150-ամյակն առհասարակ անտեսվել է թե՛ կրթության, թե՛ առողջապահության նախարարությունների եւ թե՛ Պետական համալսարանի ու Բժշկական համալսարանի կողմից... իսկ վաղը կլրանա բժշկապետի 160-ամյակը, եւ դարձյալ՝ խոր լռությո՞ւն:

AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 9



# Ամերիկահայ բժիշկ Լեւոն Նազարյանն արժանանում է «Ուլտրաձայնային ախտորոշման ռահվիրա» մրցանակին



ՀԲԸՄիության Կենտրոնական վարչության անդամ, ամերիկյան չափանիշով հռչակավոր բժիշկ Լեւոն Նազարյանն արժանացել է «Joseph H. Holmes Clinical Pioneer Award» 2017 թ. մրցանակին՝ ուլտրաձայնային ախտորոշման բնագավառում ձեռք բերած հաջողությունների եւ նորարարությունների համար:

Նշյալ մրցանակին ամեն տարի արժանանում են աշխարհում լավագույն երկու գիտնական բժիշկներ, որոնց ձեռքբերումները հիշյալ ոլորտում առավել նշանակալից են ու տեւական: Բժիշկ Լ. Նազարյանը մասնագետ է հատկապես մկանային հիվանդությունների ուլտրաձայնային հետազոտությունների բնագավառում եւ ունեցել է հսկայական ներդրում այդ մարզում: Գիտաբժշկության իր ասպարեզի ընթացքում դոկտ. Նազարյանը ավելի քան 490 դասախոսություն է տվել շուրջ 25 երկրներում, մասնակցել մոտ 150 գիտաժողովների, որոնց ընթացքում հանդես է եկել զեկուցումներով ու ցուցադրական ելույթներով, արժանանալով 40-ից ավել մրցանակների՝ «Վաստակաշատ ծառայություն», «Ուսուցման գերազանցություն», «Լավագույն բժիշկներ Ամերիկայում» եւ այլ անվանակարգերում:

Բժ. Լեւոն Նազարյանը սերում է Նազարյանների մեծ գերդաստանից: Նրա ընտանիքը շուրջ 400 տարվա բարերարության պատմություն ունեցող գերդաստանի շառավիղն է: Նրա մեծ հայրը՝ Լեւոն Նազարյանը, դեռեւս անցյալ դարի կեսերին առանձին հիմնադրամով օժտված դպրոց է կառուցել Բեյրութում: Իսկ հայրը՝ Նազար Նազարյանը, բազմաթիվ բարերարություններ է արել Սփյուռքում եւ Մայր Հայրենիքում, եւ ինչպես որդին այժմ, այնպես էլ հայրը՝ Նազար Նազարյանը, մեր ազգին ու հայրենիքին ծառայում են ՀԲԸՄիության միջոցով, հանդիսանալով նրա Կենտրոնական վարչության անդամ, գանձապահ եւ Խնամակալ մարմնի անդամ:

Նրանց վերջին ժամանակաշրջանի ամենամեծ նվիրատվության շնորհիվ Երեւանի բժշկական համալսարանի հիվանդանոցն օժտվել է առանձին շենքով եւ գերժամանակակից սարքավորումներով եւ հայտնի է «ՀԲԸՄ-ԵՊԲՀ Լեւոն եւ Կլաուդիա Նազարյան ռադիոլոգիայի կենտրոն» անունով:

Քաղված՝
ՌԱԿ պաշտոնաթերթ «Պայքարից»

# «Դեսպանի այգին» մտած «հայաստանցի պարոնը»

***Մեր թերթի վաղեմի բարեկամ, բարեկամության արժեքը շատ լավ իմացող, սկզբունքային եւ անկեղծ մարդ, հայրենասիրությունն ու մարդասիրությունը գործնականորեն կիրառող, բարեհոգի, նուրբ հումորի տեր Ռոմեն Կոզմոյանը օրերս դարձավ 80 տարեկան: Շնորհավորում ենք ոչ միայն խմբագրության, այլեւ հոբելյարի բազմահարյուր ընկերների, բարեկամների, երախտագետ հայրենակիցների անունից՝ Սփյուռքի տարածքում թե Մայր հայրենիքում: Քաջառողջություն եւ գործունեության հարատեւություն ենք մաղթում նրան եւ նոր գրքերի ծնունդ՝ վավերական ու վավերագրական:*** «ԱԶԳ»

*Վիլյամ Սարոյանը Լենինգրադից՝ Մոսկվայով գալիս էր Հայաստան: 1976 թվականն էր, Մոսկվայի Դոմոդեդովո օդանավակայանում Մոսկվա-Երեւան ինքնաթիռը ուշանում է 4 ժամ: Սարոյանն անհանգիստ է: Ու որպեսզի ժամանակը շուտ անցնի, կամ զուտ հետաքրքրությունից դրդված (ո՞վ գիտի մեծերին), հարցնում է կողքին կանգնած, իրեն ուղեկցող տղաներից մեկին. «Ինչո՞ւ քու անունդ Ռոմեն է, դուն հայ չե՞ս»: Տղան էլ բացատրում է, որ իր ծնողներն իրեն կոչել են ի պատիվ Ռոմեն Ռոլանի: Սարոյանը հետաքրքրվում է. «Անիկա ի՞նչ ըրած է հայու համար»: Տղան որոշ բաներ պատմում է... Հետո, մի քանի օր անց Երեւանում Սարոյանն ու Ռոմեն անունով տղան նորից են հանդիպում: Վերջինս մոտենում է, վստահ, որ Վարպետն իրեն կհիշի, բարեւում է, իսկ Սարոյանն ասում է. «Բարեւ, դուն ո՞վ ես»...*

**Ռոմեն Կոզմոյան: Եթե եղել եք Սարդարապատի թանգարանում ու Մահապարտների գնդի նկարը տեսել եք, ապա այդ նկարի կենտրոնում նստած հոգեւորականը նրա պապն է, իսկ ցածի շարքի աջից երկրորդը քեռին է՝ Մուկուչը: Ինքը՝ Կոզմոյանը, նախնիների մասին այս բացահայտումն արել է, երբ 50 տարեկան էր ու մայրը նրան պատմեց այդ նկարի ու նրա հերոսների մասին, որոնք բոլորն էլ շատ «բան ըրած են հայու համար», որոնց բոլորից Կոզմոյանն ինքն է ժառանգել-սովորել «շատ բան անել հայու համար», բոլոր հայերի՝ կոմունիստ, դաշնակցական, հնչակյան, ռամկավար, սփյուռքահայ, հայաստանցի:**

## «Հայաստանցի պարոնը»

- Հայաստանցի պարոն, դուն Արարատը տեսե՞ր ես: Ճի՞շտ է, որ Արարատը ամենաբարձր լեռն է:- Խարտյաշ, վճիտ աչքերով կիպրոսահայ Տիգրանիկն է: Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության մարզադաշտում ՀԲԸՄ-ի Երիտասարդական Ընկերակցության կազմակերպած 9-րդ Նավասարդյան խաղերն են (այդպիսի ժամանակներ կային): Աշխարհի բոլոր վայրերից ժամանել են: Հայեր են՝ Ժնեւից, Հալեպից, Փարիզից, Ամմանից, Դամասկոսից, Բեյրութից, Երուսաղեմից... Հայեր են: Այնտեղ է նաեւ Կոզմոյանը, նա «հայաստանցի պարոնն» է: Տիգրանիկն էլի է հետաքրքրվում հայաստանցի պարոնից. «Դուն ո՞ր խումբին հետ ես, հայաստանցի պարոն»: Կոզմոյանն էլ պատասխանում է՝ Բեյրութի, Հալեպի, Երուսաղեմի, նայած թե ո՞ր խումբն է այդ պահին մարզադաշտում: «Հայաստանցի պարոնը բոլորին հետ է», ուզում է Տիգրանիկին պատասխանել Կոզմոյանը, բայց չի պատասխանում, նա ուրախ չէ, նա ուզում է, որ այդ երիտասարդների կրծքերին Փարիզ, Ամման, Դամասկոս,... անունները ջնջվեն:

Ավելի ուշ՝ 1983-ի մարտի 26-ին, Բեյրութի «Զարթօնք» թերթը պետք է փնտրի «սփյուռք» բառը բառարաններում եւ արձանագրի, որ ինչ լավ է, որ այդ բառը բառարաններում չկա: Քանի որ սփյուռքն ապրում է մի հույսով, որ իր անունը չհասցնի մտնել բառարան...Չնայած, ինչո՞ւ չմտնի, թող մտնի, գրում է «Զարթօնքը», մտնի որպես չմոռացվող պատմություն, որպես հատուցման ազդակ եւ որպես ապագայի դաս:

«Հայաստանցի պարոն» Ռոմեն Կոզմոյանը մասնագիտությամբ դիվանագետ է: Երկար տարիներ աշխատել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում՝ Արեւելյան երկրների բաժնի վարիչ, այնուհետեւ Լիբանանում՝ ԽՍՀՄ դեսպանատանը: Բեյրութից վերադարձից հետո աշխատել է նույն կոմիտեում, որպես նախագահի տեղակալ... Հիմա նա նորից սփյուռքի հետ է, արդեն շուրջ 45 տարի, 45 տարի՝ վարագույրի հետեւում:

## «Ամբողջ կյանքում վատ բան չեմ արել. վախենում եմ». Ռոմեն Կոզմոյան

1960-ականներն են, մասնակի ներգաղթի ժամանակները: Կոզմոյանն ինքը, ինչպես ինքն է՝ վստահաբար համեստորեն ասում, ներգաղթի հետ կապ չի ունեցել, նրա առաքելությունը եղել է ժամանողների անձնագրային տվյալների ճշտումը:

Այդ ժամանողներից մեկն էլ Օհան հայրիկն էր. Բաթում էր ժամանել Սիրիայից: Ավելի ճիշտ՝ բերել էին 5 թոռները. մեծ Օհանը, փոքր Օհանը, Րաֆֆին, Օսաննան ու Սալբին: Օհան հայրիկը փոքրիկ մորուքով, վտիտ, սառը մի մարդ էր, որը շնչում էր, սակայն միայն շնչում էր: Ոչ ուտում էր, ոչ խմում, ոչ խոսում, պառկած էր պատգարակին, ու թոռներն ասում էին. «Քսան օրե ավելի այս վիճակին մեջ է, չէինք ուզեր բերել, բայց փափագն էր: Ըսավ՝ մեռնիմ ալ նե, ինձի Հայաստան տարեք»: Կոզմոյանը, չնայած մեծ ծանրաբեռնվածությանը, չի կարողանում կտրվել հայրիկից, որն ինչ-որ առումով հայրենիք ներգաղթյալի խորհրդանիշ էր դարձած: Օհան հայրիկի կողքին Կոզմոյանը հիշում է իր պապիկին, որը Սարդարապատից հետո ծառայության անցավ ռուսական բանակում, ապա մահացավ Բաթումում եւ հուղարկավորվեց տեղի հայկական եկեղեցու բակում:

Ներգաղթյալներին բերող քարավանգնացքը հասավ Ալավերդի: «Հայրիկ, հասանք, հայրենիք հասանք»: Օհան հայրիկի թոռներն էին: Կոզմոյանն այսօրվա պես հիշում է. Օհան հայրիկը բացեց աչքերը, ժպտաց: Նրան իջեցնում են ցած, նա փլվում է գետնին, համբուրում հողն ու մի կերպ նորից բարձրանում գնացք:

Արդեն Վանաձորում ներգաղթյալների գնացքը դիմավորում են փողային նվագախմբով, ծաղիկներով: Կոզմոյանը դիմում է Օսաննային, որ պապիկին մոտեցնեն գնացքի պատուհանին, որպեսզի նա էլ տեսնի ընդունելությունը: Օսաննան էլ պատասխանում է. «Հայրիկի լուսամուտը Ալավերդիի մեջ հավերժ փակվեցավ»...

Հետո Կոզմոյանը պետք է գրի. «Իմ կյանքում Օհան հայրիկի մահը միակն էր, որը կարծես թե թեթեւացած սրտով ու հոգու հանգստությամբ ընկալեցի: Մարդն իր երազին հասավ, տա Աստված, որ նրա հոգին էլ գնա մեզ անհայտ մի այլ աշխարհ, ուր Հայրենիք չկա...»:

## «Դեսպանի այգին»

Լիբանան ներխուժած իսրայելցի զինվորներով լցված Բեյրութում ԽՍՀՄ դեսպանատունն իր խնդիրներն ուներ: Չնայած աշխատակիցներն աշխատավարձը ժամանակին էին ստանում, իսկ դեսպանատունն էլ ուներ էլեկտրականության սեփական աղբյուրը, որի խաթարվելու դեպքում այն անվճար վերանորոգվում էր պարոն Սանջյանի միջոցներով, բայց խնդիրներ կային: ԽՍՀՄ բեյրության դեսպանատան տարածքում, վարչական շենքի 2 պատերին կից դեսպանատան այգին էր, ավելի ճիշտ՝ «Դեսպանի այգին»: Կոզմոյանը հիշում է, որ խաղաղ օրերին դեսպան Սոլդատովը երեկոյան ժամերին տիկնոջ հետ երկար նստում էր այդ այգում եւ կամ զրուցում էր այնտեղ բարձրաստիճան դիվանագետների հետ: Կոզմոյանն այդ այգին մտնողների ցանկում չէր: Բայց մի օր, դեսպանատան հերթապահ զինվորը հայտնում է, որ դեսպանը Կոզմոյանին խնդրում է մտնել այգի: Սոլդատովը հետաքրքրվում է Կոզմոյանի ընտանիքից, Բեյրութում մենակ ապրելու դժվարություններից, ապա խնդրում, որ Կոզմոյանն իրեն մանրամասն պատմի տեղի հայ համայնքի կյանքից: Հանկարծ դեսպան Սոլդատովն ուղիղ հարցնում է. «Ո՞վ է Սարգիս Սարգիսյանը»: Կոզմոյանը բնականաբար ճանաչում է, ներկայացնում է, եւ Սոլդատովն էլ հայտնում է, որ Սարգիս Սարգիսյանը երկու օր առաջ ուշ ժամի եկել է դեսպանատուն ու խնդրել, որ իրեն ներքին հեռախոսով կապեն դեսպանի հետ. խիստ կարեւոր ասելիք ունի: Դեսպանի հանձնարարությամբ Սարգիսյանը մտել է ընդունարան, սեղանին դրել ձեռքի պայուսակը, եւ հայտնել, որ պայուսակի մեջ գումար է, բերել է, քանի որ գիտի, որ դեսպանատունը դրամի կարիք ունի: Սոլդատովը խնդրել է Կոզմոյանին, որ Սարգիսյանին հայտնեն՝ ինքն ու իր տիկին Ռուֆինան զգացված եւ հուզված են... Կոզմոյանն իհարկե այդ մասին ոչ իր գրքում է գրել, ոչ էլ ինձ է ասել, բայց կարծում եմ հասկանալի է, թե ինչո՞ւ էր դեսպան Սոլդատովը հենց Կոզմոյանին կանչել «Դեսպանի այգի»՝ պարզելու, թե ո՞վ է վերջինիս ծանոթ հնչակյան Սարգիս Սարգիսյանը: Սոլդատովը նաեւ նշել է, որ դեսպանատանն աջակցելու առաջարկ ինքը ստացել է մեկ այլ բեյրութահայից՝ ռամկավար Զավեն Կոստանյանից, իսկ առաջարկը ստացել է Բեյրութում սովետական դեսպանատանն աշխատող հայ դիվանագետներից մեկի միջոցով: Կոզմոյանը պարզում է. այդ դիվանագետը Էդվարդ Նալբանդյանն էր, որն, ինչպես Կոզմոյանն է հիշում՝ «Դեսպանի այգում նստելու իրավունք ուներ եւ Սոլդատովի սանն ու սիրելի էր»:



❖❖❖

Կարելի է երկար բացել կամ բաց թողնել 45 տարի փակ մնացած այս վարագույրը, որը կոչվում է Ռոմեն Կոզմոյան: Բայց, թերեւս, ավելի կարեւոր բան կա: Ապացուցել, հավատացնել, համոզել նրան, որ անշուշտ, դեպի աշուն չի գնում նա, որ նրան՝ իր այդքան սիրած դեղին տերեւները չէ, որ սպասում են, որ նա դեռ շատ գործեր ունի անելու, ավելին՝ քան արել է, իսկ արել է՝ անվերջանալի շատ, որ նա այսօր կիպրահայ Տիգրանիկի պատկերացրած՝ աշխարհի ամենաբարձր լեռան գագաթին է, որտեղ օրն ուշ է մթնում:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 10



# Համայնքների խոշորացման ճակատագրական փաթեթը

Ազգային ժողովում քննարկվում է օրենսդրական փաթեթ, որով Հայաստանի համայնքների խոշորացման ծրագրեր են իրականացվելու: Ըստ նախաձեռնության հեղինակ կառավարության ներկայացուցչի` ավելի շուտ խոշորացվում է համայնքների կառավարման համակարգը, որը կբերի ներդրումների, ֆինանսական միջոցների կենտրոնացման ու արդյունավետ բաշխման, իսկ վերահսկողության մեծացման ու կոլեգիալ կառավարման արդյունքում կբարելավվի համայնքների բնակիչների կենսամակարդակը: Փաթեթը, սակայն, միանշանակ չի ընդունվում պատգամավորների կողմից, այն ունի ընդդիմախոսներ` ի դեմս «Ծառուկյան» դաշինքի խմբակցության հատկապես: Նշենք, որ համայնքների զգալի մասում նույնպես դիմադրում են խոշորացմանը` տարբեր մտահոգություններ առաջ քաշելով: Սա ճակատագրական օրինագիծ է Հայաստանի համար, որն էականորեն փոխելու է իրերի դրությունը համայնքներում, բացի այդ` կնշանակվեն նոր ընտրություններ` արդեն խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման նոր մարմիններ ձեւավորելով: Վստահ ենք, որ փաթեթի շուրջ կրքեր դեռ բորբոքվելու են:

**Մ. Խ.**

# Համանախագահները գալիս են

Հունիսի 10-ին Հայաստան են այցելելու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Նրանք մեկնելու են Արցախ, հետո նաեւ Բաքու: Ըստ

ՌԴ արտգործնախարարության մամուլի խոսնակ **Մարիա Զախարովայի**` համանախագահներն ուզում են ԼՂ հարցի շուրջ հստակեցնել իրավիճակը: Թե ինչ հստակեցումների մասին է խոսքը` Զախարովան չի մանրամասնել, իսկ Հայաստանի փոխարտգործնախարար **Շավարշ Քոչարյանն** այդ այցից մեկ ակնկալիք ունի`ադրբեջանական կրակոցների դադարեցում սահմաններում:

Հետաքրքրական է, որ համանախագահների այցն այս անգամ զուգահեռվում է տարածաշրջանային սուր իրավիճակների հետ` Քաթարի շուրջ զարգացումները եւ նախորդ օրը Իրանում տեղի ունեցած ահաբեկչությունները: Արդյոք համանախագահների այցը կապ ունի՞ տարածաշրջանային անվտանգության այս հանգրվանի հետ, թե հերթական, շարքային այց է, եւ ի՞նչ էր ակնարկում Մարիա Զախարովան` հստակեցում ասելով, շուտով պարզ կլինի: Սակայն մեր պաշտպանական ուժերի գերուշադրությունն այս օրերին մեր սահմաններում ավելորդ չէ:

**Մ. Խ.**

# Գյումրու համայնքային թանգարաններն էլ կլինեն մուտքավճարով

Մեր պետական կառույցների պաշտոնական լեզվում հայերենը երբեմն այնպես է ոլորվում ու ծռմռվում, որ ստացված գլուխկոտրուկը հասկանալու համար լրացուցիչ ջանք է պահանջվում: Գյումրու ավագանին օրերս կայացրած որոշումներից մեկով հաստատել է` «Գյումրու համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցվող վճարների նկատմամբ արտոնությունների սահմանման եւ կիրառման կարգը»: Խոսքը վերաբերում է այստեղ գործող Մհեր Մկրտչյանի թանգարանի, Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանների եւ Մարիամ ու Երանուհի Ասլամազյանների պատկերասրահի մուտքի վճարներ ու այցելուների որոշ խմբերի համար դրա հետ կապված արտոնություններ սահմանելուն:

Բավական աշխույժ գործող նշված թանգարանային օջախները, ի տարբերություն պետբյուջեից ֆինանսավորվող նման հաստատությունների, մինչեւ այժմ այցելուներին ընդունել են առանց մուտքի վճարի, ունեցել են միայն հանգանակությունների արկղ, ուր այցելուն կարող էր ըստ ցանկության դրամ գցել: Այս մեթոդն իրեն չի արդարացրել, եւ թանգարանների տնօրենները հանդես են եկել մուտքի ու էքսկուրսավարների ծառայությունների վճարներ սահմանելու առաջարկությամբ, որն ընդունվել է: Դրա հետ մեկտեղ սահմանված արտոնություններով մուտքավճար չի գանձվի պետական պաշտոնական պատվիրակություններից, մշակույթի ոլորտի ուսանողներից, ժամկետային զինծառայողներից, ստեղծագործական միությունների անդամներից, նախադպրոցական տարիքի երեխաներից եւ այլ անձանցից, իսկ մինչեւ 12 տարեկան երեխաների, բոլոր ուսանողների, թոշակառուների համար սահմանվել է 50 տոկոս զեղչ:

Ակնկալվող գումարները կուղղվեն թանգարանների պահպանման եւ այլ ծախսերը հոգալուն: Մնացածը թերեւս ժամանակը ցույց կտա:

**Գ. Մ.**

# Մեկնարկեց Արամ Խաչատրյանի անվան 13-րդ միջազգային մրցույթը. վոկալ

**ԳՈՒՐԳԵՆ ԽԱԺԱԿՅԱՆ**

Հունիսի 6-ին` Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, մեկնարկեց մեծն կոմպոզիտորի անվան արդեն 13-րդ միջազգային մրցույթը, որն այս տարի առաջին անգամ անցկացվում է «վոկալ» մասնագիտությամբ:

Այս իրադարձությանը նվիրված Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կայացած ասուլիսում ՀՀ մշակույթի նախարար **Արմեն Ամիրյանը** հիշեցրեց կոմպոզիտորի հետեւյալ խոսքերը.«Մենք պետք է այնպիսի՛ երաժշտություն գրենք, որ աշխարհն այն սիրի, եւ սիրելով այդ երաժշտությունը հետաքրքրվի` ո՞րն է այդ ժողովուրդը, որը ծնել է նման կոմպոզիտորներ, որտե՞ղ է այն, ուր ստեղծվում են այսպիսի հիանալի ստեղծագործություններ»: Եվ կարծում եմ, որ Խաչատրյանի անվան մրցույթը հենց Արամ Խաչատրյանի այս հիանալի միտքը իրականություն դարձնողն է,- ասաց նախարարը:



Արմեն Ամիրյանը նաեւ վստահություն հայտնեց, որ այսօր մրցույթին մասնակցող երիտասարդները, տեսանելի ապագայում դառնալով աշխարհահռչակ, հպարտությամբ են հիշելու իրենց մասնակցությունը խաչատրյանական մրցույթին:

Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Միջազգային հումանիտար եւ մշակութային համագործակցության հարցերով ՀՀ նախագահի խորհրդական **Արմեն Սմբատյանը** լրագրողներին տեղեկացրեց, որ մասնակցելու ցանկություն ունեցողների թիվը գերազանցել է հարյուրը, ընտրվել է 43 երգիչ աշխարհի տարբեր երկրներից` ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Մեքսիկա, Կիպրոս, Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան, Արցախ եւ այլն: Նրա վկայությամբ, մրցույթի ժյուրին բավականին պատկառելի կազմ ունի. դրա նախագահն է ՌԴ վաստակավոր արտիստ, աշխարհահռչակ դիրիժոր, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Կոնստանտին Օրբելյանը, ժյուրիի կազմում են կանադահայ սոպրանո Իզաբել Պայրաքտարյանը, Ջոն Ֆիշերը, Մարկ Հիլդրյուն, Ջորջ Պարոդին, Ռիչարդ Ռոդզինսկին, Անդրեյս Ժագարսը, Էդուարդ Թոփչյանը:

Այն հարցին, թե ինչո՞ւ որոշվեց այս տարի մրցույթն անցկացնել «վոկալ» անվանակարգում, Արմեն Սմբատյանն ասաց. «Վոկալիստների բազմաթիվ մրցույթներ կան աշխարհում: Էնպես որ ինչ-որ մի արտառոց բան չենք որոշել...Գիտե՛ք, վերջին տարիներին շատ լավ նոր ձայներ են հայտնվել Հայաստանում... Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիան (WFIMC, որի անդամն է խաչատրյանական մրցույթը), դա ընդունեց: Սկզբում չէին համաձայնում, որովհետեւ Արամ Խաչատրյան մրցանակաբաշխությունը ավելի շատ գործիքային արվեստի հետ էր կապվում, բայց մենք կարողացանք նրանց համոզել...»:

«Մրցույթի մասնակիցների առջեւ դրված պարտադիր պայմաններից է` Խաչատրյանից բացի, կատարել նաեւ Կոմիտասի ստեղծագործություններից: Մասնակիցներին կդատի միջազգային հեղինակավոր ժյուրին, հուսանք` հաշվի առնելով նաեւ հանդիսատեսի ճաշակը»,- տեղեկացրեց Արմեն Սմբատյանը: **Էդուարդ Թոփչյանն** էլ կատակեց. «Ունկնդրի ճաշակին հետեւելը հնարավոր է, բայց վտանգավոր: Պրոֆեսիոնալ ժյուրին հենց նրա համար է, որ մրցույթը չդառնա Եվրոտեսիլ»: Նա նշեց, որ Խաչատրյանի մրցույթը աշխարհում նշանակություն ունեցող իրադարձություն է, ինչը լավ է թե՛ Խաչատրյանի, թե՛ մեր երկրի հանրահռչակման առումով, շեշտելով, որ ինքն ուրախ է լինել ժյուրիի կազմում, քանի որ սիրում է օպերային երաժշտությունը:

«Այս մրցույթը միշտ էլ նշանակալից է, որովհետեւ այն բացահայտում է տաղանդավոր հրաշալի երիտասարդների, մարդկանց, որոնք իրենց կյանքը նվիրել են մի բանի, որն աշխարհում լավագույնն է` երաժշտությանը: Ուրախ եմ, որ այս տարի մրցույթն անցկացվում է «վոկալ» ժանրում: Համոզված եմ, որ բոլորը գերագույն հաճույք կստանան»,- ընդգծեց **Կոնստանտին Օրբելյանը**:

«Ամեն տարի այս մրցույթին, որը հիմնադրվեց ի պատիվ Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի` 2003 թվականին, մասնակցում են բազմաթիվ անվանի երաժիշտներ` ինչպե՛ս ժյուրիի կազմում, այնպես էլ որպես պատվավոր հյուրեր», - ասաց Օրբելյանը: Այս տարի նրանց թվում են Էլժբետա Պենդերեցկան` Լյուդվիգ վան Բեթհովենի անվան Զատկի փառատոնի խորհրդի նախագահ եւ գլխավոր տնօրեն, Հովարդ Ուիթկինսը` «Մետրոպոլիտեն օպերա»-յից, օպերային հայտնի երգչուհի Օմեդա Կազլաուսը եւ այլք:

«Այս մրցույթը բացառիկ է այն բանով, որ մեծն Կոմիտասի ստեղծագործությունները կկատարեն մրցույթի օտարազգի մասնակիցները, որոնք երբեք չեն խոսել հայերեն»,- ասաց **Իզաբել Պայրաքտարյանը**:

Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հաղթողը որպես պարգեւ ստանում է 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, երկրորդ եւ երրորդ տեղերի մրցանակակիրները` համապատասխանաբար 5 հազար եւ 3 հազար դոլարին համարժեք դրամ: Կան նաեւ հատուկ մրցանակներ: Մրցույթը բաղկացած է նախընտրական լսումների փուլից եւ 3 հիմնական փուլերից:

Մրցույթի առաջին փուլը (1-ին, 2-րդ օր) կանցկացվի հունիսի 7-ին եւ 8- ին. ելույթ կունենան նախընտրական փուլում հաղթած 43 մասնակիցները: Երկրորդ փուլը կկայանա հունիսի 9-ին, 10-ին: Կմասնակցի 20 երաժիշտ: Երրորդ փուլ անցած 10 մասնակիցները հունիսի 11-ին իրենց համարները կփորձեն մրցույթի պաշտոնական` Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հետ, որպեսզի լավագույնս ներկայանան հունիսի 12-ին եւ 13-ին կայանալիք երրորդ փուլում, որի ընթացքում էլ կորոշվեն հաղթողները: Հունիսի 14-ին ավանդական գալա-համերգով տեղի կունենա մրցույթի փակման արարողությունը:

Խաչատրյանական մրցույթն անցկացվում է ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո: Կազմակերպիչներն են «Արամ Խաչատրյան-մրցույթ» մշակութային հիմնադրամը, ՀՀ մշակույթի նախարարությունը եւ Երեւանի պետական կոնսերվատորիան: Մրցույթի գլխավոր գործընկերն է ԱՊՀ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամը, աջակիցը` «Արդշինբանկը»:

Հունիսի 6-ի երեկոյան Արամ Խաչատրյան համերգասրահում կայացավ կոմպոզիտորի կիսանդրու բացման հանդիսավոր արարողությունը, որտեղ ելույթ ունեցան ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, Հայաստանի երաժշտական ընկերակցության նախագահ Դավիթ Ղազարյանը: Կիսանդրու ստեղծմանն աջակցել է ռուսաստանաբնակ բարերար Արմեն Սադոյանը: Հեղինակի` Հայաստանի վաստակավոր նկարիչ Միքայել Սողոյանի եւ բարերարի համատեղ որոշմամբ կիսանդրին նվիրաբերվել է ՀՀ մշակույթի նախարարությանը:

Այնուհետեւ Օպերային թատրոնում կայացավ մրցույթի բացման համերգը: Ելույթ ունեցան Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը եւ հատուկ այս օրվա համար ժամանած ԱՊՀ երկրների երիտասարդական նվագախումբը, Օպերային թատրոնի երգչախումբը, Իզաբել Պայրաքտարյանը, «Բոլշոյ» թատրոնի մենակատարներ, ուրիշներ: Հնչեցին Արամ Խաչատրյանի, Ժյուլ Մասնեի, Ջոակինո Ռոսինիի, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ստեղծագործությունները:

AZG NEW SHABAT.QXD  07/06/2017  22:10  Page 11



# Ի ճանաչումն Ցեղասպանության

Եվս մեկ ապտակ Թուրքիային Իսպանիայի կողմից: Եվ այսպես Սուեկան դարձավ Իսպանիայի 28-րդ քաղաքը, որ պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

Սուեկայի քաղխորհուրդը կազմող 5 կուսակցությունները, Կոմպրոմիսը, Սիուդադանոսը, Սոցիալիստական եւ Ժողովրդական կուսակցությունները եւ Պոդեմոսը կողմ քվեարկեցին Արարատ Հայկական միության ներկայացրած միջնորդագրին, որը ներկայացրել էին Սուեկայում միության ներկայացուցիչներ Էլլա Ղազարյանը եւ Արարատ Առաքելյանը:



Բանաձեւը նիստում պաշտպանեց քաղաքապետ **Ռակել Տամարիտը**: Թուրքիայի իշխանությունների ժխտողական քաղաքականությանն ուղղված քննադատական ելույթներով հանդես եկան նաեւ խորհրդի մյուս ներկայացուցիչները, հորդորելով Իսպանիայի կենտրոնական իշխանությանը հետեւել իրենց օրինակին:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ հայկական միության նախագահ **Արարատ Ղուկասյանը**, ով պատմական համարեց Սուեկայի այս քայլը եւ խնդրեց միասնաբար պայքարել արդարության հաստատման եւ ցեղասպանության միջազգային ճանաչման համար:

**Ararat Asociacion**
**Իսպանիա**

# Քեմալբայ: 560 երեխաներ թուրքական բանտերում են



Խորհրդարանական խմբավորման հետ վերջերս կայացած հանդիպման ժամանակ, Թուրքիայի քրդամետ ժողովրդա-դեմոկրատական կուսակցության (HDP) նորընտիր համանախագահ **Սերպիլ Քեմալբայը** հայտարարել է, որ ներկայիս թուրքական բանտերում են գտնվում 560 երեխաներ իրենց մայրերի հետ: «Այս թիվը մեկով ավելանալու է, քանի որ մեր պատգամավորներից Բուրչու Չելիքը` Մուշի շրջանից, խնդրել է, որ իր բանտարկության ժամկետը անցկացնի իր 3-ամյա զավակի հետ», նշել է նա:

Սա Քեմալբայի առաջին հանդիպումն էր խորհրդարանականների հետ, այն բանից հետո, երբ HDP-ի արտակարգ նիստում ընտրվեց կուսակցության համանախագահ` փոխարինելու համար բանտարկված Ֆիգեն Յուքսեկդաղին:

Իր ելույթում Քեմալբայը քննադատել է իշխող AKP կուսակցության «ժողովրդավարություն եւ փոփոխություններ» կարգախոսը ասելով, որ նրանք այդ մասին չեն էլ մտահոգվում: «Իրենց համագումարը եզրափակվեց արտակարգ իրավիճակը երկարաձգելու որոշումով», նշել է նա:

Քեմալբայը նաեւ խիստ քննադատել է վերջերս Մանչեստրում (Բրիտանիա) կատարված ռմբահարքը, որին զոհ գնացին նաեւ բազմաթիվ երեխաներ: «Ես ողջունում եմ բոլոր ուժերին, որոնք դիմադրում են ԻՊ-ին: Մենք պետք է շարունակենք պայքարը», եզրափակել է նա իր ելույթը:

Հ. Ծ.

# Արեւմուտքը սկսել է վախենալ ՆԱՏՕ-ում Թուրքիայի ներկայությունից

## *Գերմանիան կմնա՞ արդյոք «Ինջիրլիքում»*

Գերմանիայի արտգործնախարար Զիգմար Գաբրիելը հունիսի 5-ին մի խումբ պատգամավորների հետ պետք է այցելեր Թուրքիայի հարավում` Ադանայի մոտ գտնվող «Ինջիրլիք» ռազմակայան: Ավելի վաղ նա Վաշինգտոնում այցելության հարցը քննարկել էր ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլլերսոնի հետ` հուսալով, թե ԱՄՆ-ը կկարողանա ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Այցի կապակցությամբ վերջերս Բրյուսելում ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը բանակցել էր Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Բանակցությունները արդյունք չէին տվել: Դրանից հետո Գերմանիան Թուրքիային 2 շաբաթ ժամանակ էր տվել «Ինջիրլիքի» հետ կապված վեճը հարթելու համար: Եվ դարձյալ ապարդյուն:

Անկարան ռազմակայան այցելելու մտադրություն հայտնած Բունդեսթագի մի շարք պատգամավորների մեղադրեց PKK-ի հետ կապեր ունենալու մեջ, իսկ հետո Բեռլինից պահանջեց իր հետ համաձայնեցնել «Ինջիրլիք» այցելելու մտադրություն ունեցող պատգամավորների ցանկը, որպեսզի այնտեղ չլինեն «ահաբեկիչներին բացահայտորեն հովանավորողներ»: Ի վերջո, հենց հունիսի 5-ին, Անկարան արգելեց պատգամավորների այցը:

Առաջին հայացքից թվում է, թե Անկարայի եւ Բեռլինի փոխադարձ խիստ մեղադրանքները հուզական բնույթ են կրում, եւ թե հետագայում երկու երկրների հարաբերությունները կկարգավորվեն: Գուցեեւ այդպես է, թեեւ պետք է նշել, որ Գերմանիան շրջափակել է Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության մի շարք նախագծեր, հրաժարվել է Թուրքիայի քաղաքացիներին շնորհել անայցագիր ռեժիմ, սկսել է Անկարային խստիվ քննադատել մարդու իրավունքների եւ ազատությունների ոտնահարման առնչությամբ: Անցյալում եւս նման բաներ եղել են, սակայն` ոչ այսպիսի խստությամբ: Փորձագետների Թուրքիա-Եվրոմիություն ներկայիս հակամարտությունը կարելի է աննախադեպ համարել վերջին 30 տարում:

Ի դեպ, փարիզյան ահաբեկչություններից հետո` 2015 թ. դեկտեմբերին, Գերմանիան միացավ «Իսլամական պետության» դեմ պայքարող միջազգային կոալիցիային: «Ինջիրլիք» ուղարկվեցին հատուկ օպտիկական սարքերով հանդերձավորված «Տորնադո» ռազմօդանավեր եւ մեկ Airbus A310 MRTT լիցքավորիչ օդանավ: Գերմանիայի հետախուզության տվյալները անմիջականորեն հաղորդվում են Քաթարում գտնվող միջազգային հակաահաբեկչական կոալիցիայի միացյալ շտաբին, որտեղ գտնվում են Բունդեսվերի եւս 8 կապավորներ: «Ինջիրլիք» ռազմակայանում գերմանական զորաբաժնի հետ կապված խնդիրները ծագեցին 2016-ի հունիսին, այն բանից հետո, երբ Բունդեսթագը 1915 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի կոտորածները ճանաչեց որպես ցեղասպանություն: Թուրքիան այդ քայլը գնահատեց իբրեւ դավաճանություն, քանի որ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունը եւ Գերմանիան դաշնակիցներ էին: Սակայն Բեռլինում հայտարարեցին, որ գոյություն ունեն բազմաթիվ ապացույցներ այն բանի, որ Գերմանիան իմացել է երիտթուրքերի այն ժամանակվա կառավարության իրականացրած հայերի էթնիկական զտումների մասին:

Դա լրջորեն թուլացրեց մինչեւ օրս Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ժխտող Անկարայի միջազգային դիրքերը: Սակայն գերմանացի բազմաթիվ փորձագետների գնահատումների համաձայն, Գերմանիան չվախեցավ առերեսվել իր սեփական անցյալի հետ, եւ Թուրքիային նույնպես կոչ է արվում «ընդունել իր քաղաքակրթային ձախողումը եւ այն դարձնել իր ժամանակակից քաղաքական եւ պատմական գիտակցության մասը»: Անկարան պատրաստ չէր իրադարձությունների նմանօրինակ ընթացքին: Թուրքիայի վարչապետ **Բենալի Յըլդըրըմը** հայտարարեց, որ իր երկիրը «կգտնի համարժեք պատասխան, բայց խաղասեղանին չի դնի Գերմանիայի հետ իր սերտ հարաբերությունները»:

Պատասխան իրոք եղավ. Թուրքիայի կառավարությունը գերմանացի մի խումբ պատգամավորների արգելեց այցելել «Ինջիրլիք», որտեղ տեղաբաշխված են մոտ 260 գերմանացի զինծառայողներ: Երկկողմ հարաբերություններում էլ ավելի շատ բարդություններ ծագեցին Թուրքիայում 2016 թ. հուլիսի 15-ի պետական հեղաշրջման փորձից հետո: Գերմանիայում քննադատաբար վերաբերվեցին Թուրքիայի ներսում նախագահ Էրդողանի ձեռնարկած բռնություններին: Բեռլինը սկսեց քաղաքական ապաստան տրամադրել Գերմանիայում գտնվող թուրք զինծառայողներին: Դրանից հետո գերմանացի խորհրդարանականների «Ինջիրլիք» կատարելիք այցելությունների արգելքները սկսեցին հաջորդել մեկը մյուսին: Այնուհետեւ Բունդեսթագում սոցիալ-դեմոկրատների խմբակցությունը միաձայն քվեարկեց «Ինջիրլիքից» գերմանացի զինծառայողներին Հորդանան, Կիպրոս կամ Քուվեյթ տեղափոխելու օգտին: Ի պատասխան` Թուրքիայի արտգործնախարար **Մեւլութ Չավուշօղլուն** հայտարարեց, որ «եթե նրանք ուզում են զորքը դուրս բերել, ապա դա իրենց գործն է, եւ որ Թուրքիան որեւէ մեկին չի աղերսի եւ կասի` ցտեսություն»:

Բեռլին-Անկարա բախումը բարդություն է ստեղծում ՆԱՏՕ-ի համար, որտեղ միաժամանակ զարգանում են միանգամից երկու, բայց ըստ էության միատեսակ հակամարտություններ` «Ինջիրլիք»-ը Թուրքիայի ու Գերմանիայի միջեւ եւ քրդերը Թուրքիայի ու ԱՄՆ-ի միջեւ, նշում է «Ռեգնում» գործակալության վերլուծաբան **Ստանիսլավ Տարասովը**: Ի հավելումն այս ամենի, նախագահ **Էրդողանը** վերջերս առաջարկեց Ավստրիային բացառել ՆԱՏՕ-ի հետ գործընկերային բոլոր ծրագրերից` այն բանի համար, որ Վիեննան Բրյուսելին կոչ է անում Թուրքիայի հետ դադարեցնել Եվրոմիությանն անդամակցելուն վերաբերող ամեն տեսակ բանակցությունները: Փորձագետները կանխատեսում են նաեւ թուրք-ամերիկյան հարաբերությունների լարվածության սրում Ռաքքայի համար առաջիկա պայքարի կապակցությամբ, որի մեջ ամերիկացիները ներգրավել են սիրիացի քրդերին: Այս ամենը ստվեր է գցում ՆԱՏՕ-ի 2018 թ. կայանալիք հաջորդ գագաթաժողովի վրա: Էրդողանը դաշնակիցներին հրավիրեց իր մոտ, բայց Գերմանիան, Ֆրանսիան, Հոլանդիան եւ Դանիան հանդես եկան գագաթաժողովը Բրյուսելում` ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում անցկացնելու օգտին: Նրանց պաշտպանեցին դաշինքի անդամ ուրիշ 18 պետություններ: Այդ հարցի առթիվ վերջնական եւ պաշտոնական որոշումը կընդունվի հունիսին` ՆԱՏՕ-ի երկրների պաշտպանության նախարարների հանդիպման ժամանակ:

Արեւմուտքի մամուլը գրում է Թուրքիայի նկատմամբ հարաճուն օտարացման մասին: Դա ՆԱՏՕ-ում առավելապես մահմեդական բնակչություն եւ կարեւոր ռազմավարական դիրք ունեցող միակ երկիրն է: Մամուլը նաեւ գրում է «Եվրոպայի եւ ՆԱՏՕ-ի համար ասիմետրիկ բազմաբեւեռ ռիսկերի պայմաններում դաշինքի ներսում առաջացող պառակտման մասին»: Սիրիայի հարցում Գերմանիայի եւ ԱՄՆ-ի հետ վատացող հարաբերությունների պայմաններում Անկարան մերձեցել է Ռուսաստանի եւ Իրանի հետ, ինչը կայուն հրամայական է դառնում տարածաշրջանում Արեւմուտքի քաղաքականության համար: Ըստ որում, նշվում է, որ «ՆԱՏՕ-ի բոլոր պետությունների մեջ Թուրքիան հսկայական թվով ներքին մարտահրավերներ ունեցող միակ երկիրն է, երբ «Ինջիրլիք» ռազմակայանը դարձել է վտանգավոր»: Բացի դրանից, Էր-Ռիադում օրերս կայացած արաբա-իսլամա-ամերիկյան գագաթաժողովի արդյունքները փոխեցին տարածաշրջանային խնդիրների ընկալման կիզակետը: Ի հայտ եկան շատ հարցեր այն կապակցությամբ, թե ինչպիսի վերջնական ձեւ կընդունի նոր ռազմական դաշինքը Էր-Ռիադի գլխավորությամբ, ինչպիսի տեղ կզբաղեցնի (եւ կզբաղեցնի՞ արդյոք) Թուրքիան այդ դաշինքում, ինչպիսի ազդեցություն կգործի ամերիկա-իսլամական դաշինքը Սիրիայի ճգնաժամի վրա, որի մեջ ակտիվորեն ներքաշված են թուրքերը:

Ձեռնարկչության ամերիկյան ինստիտուտի գիտաշխատող **Մայքլ Ռուբինը** National Review հրատարակության մեջ գրում է այն տարօրինակ կացության մասին, երբ «Արեւմուտքի համար խնդիրը ոչ թե ՆԱՏՕ-ից Թուրքիայի հեռանալու հավանականությունն է, այլ նրա մնալը` սեփական ապագայի համար բեռը դաշնակիցների ուսերին բարդելու պայմանով»: Այնպես որ Թուրքիա-ՆԱՏՕ հակամարտության ինտրիգը դեռ նոր-նոր է ծավալվում: Սպասվում են մի շարք սուր սյուժեներ:

Պ. Ք.

AZG NEW SHABAT.QXD 07/06/2017 22:10 Page 12



# Կայացավ հագուստի մոդելավորման բաժնի ուսանողների ավարտական ցուցադրությունը



Մանկավարժական համալսարանում կայացավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Հագուստի մոդելավորման բաժնի ուսանողների ավարտական աշխատանքների ցուցադրությունը:

Բակալավրի եւ մագիստրատուրայի շուրջ 25 ուսանողներ իրենց ավարտական աշխատանքները ներկայացրին որեւէ թեմայի վերաբերյալ հավաքածուով՝ 3-5 հագուստ: Ի դեպ, հագուստները ներկայացնող մոդելները նույն համալսարանի պարարվեստի բաժնի ուսանողներն էին:

Դիզայնի եւ դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի դասախոսներ Արամ Նիկոլյանն ու Լիլիթ Մելիքյանը համարում են, որ ցուցադրությունը կարեւոր փուլ է ապագա դիզայներների համար, հատկապես որ նախապատրաստական եւ կազմակերպչական աշխատանքները իրականացրել են ուսանողները՝ երաժշտությունից մինչեւ մոդելների ընտրություն:

«Սա միջավայր է, որտեղ կրթվում են, իսկ կրթությունը բոլոր մասնագիտությունների հիմքն է: Այստեղ կան ուսանողներ, որոնց ակնկալում եմ տեսնել նաեւ պրոֆեսիոնալ ասպարեզում»,- aspu.am ին ասաց **Արամ Նիկոլյանն** ու անդրադառնալով ուսանողական հավաքածուներին՝ հավելեց. դրանք տարբեր են, կարեւորն այն է, որ ընձեռվեց հնարավորություն ծանոթանալու դիզայներական հետնաբեմին:

Ասիստենտ **Լիլիթ Մելիքյանը** եւս կարեւորեց ուսանողական աշխատանքների ցուցադրությունը՝ ընդգծելով, որ դիզայներների համար լսարանային քննությունը քիչ հնարավորություններ է ստեղծում ներկայացնելու հետաքրքրական մտահղացումներ ունեցող եւ ստեղծագործ մարդու աշխատանքը:

«Երբ միջամտում ես, հաճախ խանգարում ես» կարգախոսով է առաջնորդվել Լիլիթ Մելիքյանը ուսանողների հետ աշխատելիս՝ վստահ լինելով, որ նման մեծ ցուցադրության պատրաստվելիս ուսանողը ավելի լուրջ կմոտենա աշխատանքների նաեւ որակական կողմին՝ սկսած կարի որակից մինչեւ աքսեսուարների ընտրություն. սա նրանց վերջին առիթն էր պատկերացնելու համար, թե ինչպես կարող են պրոֆեսիոնալ ցուցադրություն կազմակերպել:

«Մեր նպատակն է, որ ուսանողն իր ուրույն մտածելակերպն ունենա եւ չկրկնվի»,- aspu.am-ի հետ զրույցում նշեց Լիլիթ Մելիքյանն ու հավելեց, որ հավաքածուներում կան նաեւ բարդ եւ ժամանակատար աշխատանքներ, որոնք ստեղծել են ուսանողները՝ ուսումնասիրելով տարբեր հեղինակների աշխատանքներ:

Ուսանողների ավարտական աշխատանքները ցուցադրության ընթացքում գնահատում էր մասնագետներից կազմված հանձնաժողովը՝ Գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր, դիզայներ **Արթուր Արմենյանի** ղեկավարությամբ:

«Ցուցադրությունը մի բան է, պաշտպանությունն այլ»,- նշեց հանձնաժողովի ղեկավարն ու հավելեց, որ ցուցադրության մեջ պրոֆեսիոնալ մակարդակ կար՝ չնայած նրան, որ սա իսկական արվեստ մտնելու ուսանողների առաջին փուլն էր: Պրոֆեսորը հավելեց նաեւ, որ նման ձեռնարկի կազմակերպմամբ Մանկավարժական համալսարանը համարձակ փայլ կատարեց, ինչը վկայում է մասնագիտության հանդեպ լուրջ մոտեցման եւ վերաբերմունքի մասին:

# Ազդարարվեց «Ոսկե ծիրան» Երեւանի 14-րդ միջազգային կինոփառատոնի մեկնարկի մասին

Տարվա ամենանշանավոր իրադարձություններից մեկը՝ «Ոսկե ծիրան» կինոփառատոնն, այս տարի մայրաքաղաքի մշակութային կյանքը կակտիվացնի հուլիսի 9-ից 16-ն ընկած ժամանակահատվածում:

«Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի, ՀՀ Մշակույթի նախարարության եւ կինոփառատոնի գլխավոր գործընկեր՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ներկայացուցիչներն ազդարարել են 14-րդ փառատոնի մեկնարկի մասին:

Ասուլիսն սկսվել է փառատոնի պաշտոնական ազդագրի՝ թյան եւ Թուրքիայի մերձողական քաղաքականության վրա լույս սփռելու նպատակով:

Փառատոնն ստացել էր մոտ 1100 հայտ՝ 96 երկրից: Մրցութային եւ արտամրցութային տարբեր ծրագրերում ընդգրկվել է ավելի քան հարյուր ֆիլմ:

«Կան իրադարձություններ, որոնք անգնահատելի ազդեցություն են թողնում հասարակության կյանքում. ձեւավորում են մտածողություն, ստեղծում երկրի հեղինակությունը բարձրացնելու հնարավորություն եւ սերունդներ դաստիարակում: Սխալված չեմ լինի, եթե նշեմ, որ Հայաստանում այդ իրադարձություններից մեկը «Ոսկե ծիրան» կինոփառատոնն է: Այն արժեհամակարգ ձեւավորող, արվեստի լեզվով խնդիրները վերհանող, գեղեցիկն ու առողջը սերմանող երեւույթ է, որն արդեն 14 տարի այցեքարտ է դարձել Հայաստանի համար: Հպարտ եմ տարիների մեր համագործակցության եւ փառատոնի արձանագրած հաջողությունների համար»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:



արտաքինից ծիրան հիշեցնող եւ 14-րդ փառատոնը խորհրդանշող երկրաչափական մարմնի ներկայացմամբ: Բանախոսներ ՀՀ Մշակույթի նախարար **Արմեն Ամիրյանը**, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**, «Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի հիմնադիր տնօրեն **Հարություն Խաչատրյանը**, փառատոնի ծրագրերի տնօրեն **Միքայել Ստամբոլցյանը** եւ գեղարվեստական տնօրեն **Սուսաննա Հարությունյանն** ընդգծել են տարիների համագործակցության կարեւորությունը եւ մանրամասնել 14-րդ փառատոնի որոշ ծրագրերի մասին: Մասնավորապես, հայտարարվել են հիմնական մրցութային չորս ծրագրի միջազգային ժյուրիների կազմը, բացման եւ փակման ֆիլմերը:

Փառատոնի բացմանը ցուցադրվելու է 1927թ. նկարահանված, ռեժիսոր Համո Բեկնազարյանի «Խասփուշ» ֆիլմը՝ Վահագն Հայրապետյանի եւ նրա բենդի՝ հատուկ ֆիլմի համար գրված երաժշտության ուղեկցությամբ: Այս տարի լրանում է ֆիլմի 90 ամյակը: Պարսկաստանում Խասփուշների՝ ընչազուրկ գյուղացիների եւ արհեստավորների ապստամբության մասին պատմող այս ֆիլմը հայկական առաջին պատմահեղափոխական կինոնկարն է:

Փակման համար ընտրվել է այս տարի նկարահանված, Ջո Բեռլինգերի «Բնաջնջման մտադրություն» ֆիլմը: Հայկական ցեղասպանության մասին պատմող վավերագրական ֆիլմի պրեմիերան կայացել է Տրայբեկայի կինոփառատոնում: Ռեժիսորն, ի դեպ, հանդիպում է պատմաբանների եւ գիտնականների հետ՝ Հայոց ցեղասպանության եւ Թուրքիայի մերձողական...

«Ոսկե ծիրանի»՝ ավանդական դարձած «Երեւանյան պրեմիերաներ», «Հետահայաց ցուցադրություններ» եւ «Հարգանքի տուրք» արտամրցութային ծրագրերն այս տարի եւս հանդիսատեսին եւ կինոսեր հասարակությանը կծանոթացնեն համաշխարհային կինոարվեստի գլուխգործոցներին:

Միջազգային խաղարկային, վավերագրական եւ «Հայկական համայնապատկեր» ազգային մրցույթների անցկացման համար ձեւավորվել է միջազգային ժյուրիների կազմը:

Կինոցուցադրությունները կզուգորդվեն վարպետության դասերով:

# Ցավակցություն

Չիկագոյում (ԱՄՆ) երկարատեւ հիվանդությունից հետո մահացել է ՌԱԿ վետերան անդամ **Լեւոն Տեմիրճյանը**, այդ քաղաքի նշանավոր «Սայաթ-Նովա» զույգ ճաշարաններից մեկի հիմնադիրն ու տերը, ինչպես իր հանգուցյալ եղբայրը՝ Արսեն Տեմիրճյանը, որ տերն էր նույնանուն մյուս ճաշարանի, երկուսն էլ հայտնի արեւելյան ճաշատեսակներով:

Բարեսիրտ ու նվիրյալ անձնավորություն էր Լեւոն Տեմիրճյանը, որ իր ազգային հատկանիշներով պարտ հայի իսկական կերպար էր ոչ միայն իր կուսակցական գործունեության, այլեւ աշխատանքի ընթացքում՝ իր օտարազգի հաճախորդներին ներկայացնելով իր պարտ հայի լավագույն հատկանիշները, ինչպես իր ավագ եղբայրը՝ Արսեն Տեմիրճյանը, ինչպես իր կրտսեր եղբայրը՝ բժիշկ Արմեն Տեմիրճյանը, ինչպես եղել է նրանց հայրը՝ Հաճընի 9-ամսյա ինքնապաշտպանության հերոսներից Ռուբեն Երկաթը:

Խորազգաց ցավակցություններ իր ընտանիքին, մյուս հարազատներին, Ռամկավար Ազատական կուսակցության Ամերիկայի Արեւելյան շրջանի վարչությանը: «ԱԶԳ»

# ՎիվաՍել-ՄՏՍ-ում հյուրընկալվել են Իրանից եւ Վրաստանից ժամանած երիտասարդներ

**Փորձի փոխանակումը զարգացման երաշխիքներից մեկն է: Առավել արդյունավետ է, երբ գիտելիքներով ու կուտակած փորձով փոխանակվում են տարբեր երկրների ապագա մասնագետները: ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաց դռների հերթական հյուրերը եղել են Իրանից եւ Վրաստանից ժամանած երիտասարդները, ովքեր Հայաստանում են «Առաջնորդության դպրոցի» ծրագրով: Ակտիվ եւ խոստումնալից երիտասարդները ծանոթացել են Հայաստանում ձեռնարկատիրական եւ նորագույն տեխնոլոգիական զարգացումներին՝ ուղիղ շփման միջոցով:**

**Հյուրերի համար կազմակերպվել է ճանաչողական այց ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործառնական հիմնական կենտրոններ, որի շրջանակներում նրանք ծանոթացել են զանգերի կենտրոնի, տեխնիկական վարչության եւ սպասարկման կենտրոնի աշխատանքային առանձնահատկություններին: Շրջայցն ուղեկցվել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի հետ անմիջական զրույցով եւ հարց ու պատասխանով: Բիզնեսի նորարարական միտումներով հետաքրքրված երիտասարդները հանդիպման ընթացքում ծանոթացել են նաեւ ընկերության ներքին գործառույթներին, աշխատանքային ընթացակարգին եւ տեխնոլոգիական հիմնական զարգացումներին:**

**«Ողջունելի է երիտասարդների դրսեւորած հետաքրքրությունը՝ պատասխանատու բիզնես կառավարման հիմունքների հանդեպ: Գնահատելի է հատկապես նրանց պատրաստակամությունը՝ վստահ գործելու եւ իրենց մտքերը կյանքի կոչելու հարցում: Ուրախ եմ, որ նորագույն տեխնոլոգիաների եւ կապի ոլորտում մեր երկրի փորձով կարողանում ենք օգտակար լինել նաեւ հարեւան երկրներին»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**«Առաջնորդության դպրոց» հիմնադրամն իր ռեգիոնալ զարգացման ծրագրերի շրջանակում կազմակերպել է փոխանակում՝ Իրանից եւ Վրաստանից ժամանած երիտասարդ ձեռներեցների եւ ուսանողների համար: Առավել ակտիվ եւ խոստումնալից երիտասարդները Հայաստանում հյուրընկալվելով՝ ծանոթացել են Հայաստանի զարգացման միտումներին, գործիչներին եւ կազմակերպություններին: Իրականացվող ծրագիրը կարեւոր է երկարաժամկետ համագործակցության եւ տարածաշրջանի զարգացման համար:**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 8.6.2017, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: